

Մ Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



Ս. Իրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին ներհամաւոր՝ կողմնակի :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԴՆԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

ԻՂ. ՏԱՐԻ — ՆՈՐ ԵՐԶԱՆ 1950 Վ

—≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻՊ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1950

≡ Մ Ա Ր Տ ≡

թիվ 3



ՎՍԵՄԱՇՈՒՔ ՏԻԱՐ ԳԱԼՈՒՍՏ ՊԷՅ
ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐ Ս. ԱԹՈՒՈՅ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ԻՊ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ 1950 ՄԱՐՏ ԹԻՎ 3

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		
— Մեր մեծ բարերարներուն — Վսեմ. Գալուստ Կիւլպենկեանը.		70
— Կիւլպենկեան Մատենադարան (երկի եւ Այսօր). ՊԱՐԳԵՒ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԻԱՆ		74
ԿՐՕՆԱԿԱՆ		
— Կրօնի ծաղման մասին Փոխակերպականներու սետուրիւնը.	Ե.	79
— Տերունական Ազօրքը (7).	ԳՐ. ՍՐԿ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ	82
ՔԱՆԱՍՏԵՂԱՍԿԱՆ		
— Անտառիկ.	ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆԱՆ	85
— Հաւատարմացի.	»	86
ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
— Բնագրական Բանի մը սրբազրուրիւններ Մատթեոս Առհայեցիի «Ժամանակագրութեան» մէջ եւ Զմեկիկի կողմէ Առաքելական ուղղութեամբ նամակին վերջաբանը.	ՀԱՅԿ ՊԷՐՊԷՐԵԱՆ	87
— Նորայրեան Նամականի.	Ս. ԼՕՒԵԼԼԻ	90
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ		
— Գլածար.	Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ	93
ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ		
— Վերլուծում երաժշտական զանազան սեւերու.	ՕՆՆԻԿ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ	96
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
— Ամսօրեայ լուրեր.		98
ՏԻՐՈՒՆԻ		
— Հանգիստ Տ. Յովնանէս Վրդ. Էքմեքեանի.		100

ԲԱԺՆԵՐԻՆ

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգիրն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 10

ՈՒՀԱՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՀԱՍՑԷՐՆ

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM — PALESTINE

—≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻԴ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1950

≡ Մ Ա Ր Տ ≡

ԹԻԻ 3



ՎՍԵՄԱՇՈՒՔ ՏԻԱՐ ԳԱԼՈՒՍՏ ՊԷՅ
ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐ Ս. ԱԹՈՒՈՅ

ԽՍԻՍԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ

ՎՍԵՄ. ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԸ

Նախորդ մեր Խմբագրականը նուիրուած էր Հ. Բ. Ը. Միութեան շուրջ կիսադարեան դործունէութեան, և այն մեծ իրադործումներուն՝ զորս այդ բազմաբարիք Հաստատութիւնը ջանաց և նիւթեց մեր ազգային կեանքին մէջ տարիներէ ի վեր ընդհանրապէս, իսկ Պաղեստինի մերազն ժողովուրդի և Ս. Աթուոյ նկատմամբ մասնաւորաբար, երկու տարիներէ ի վեր տեւող ծանօթ աղէտին հետեւանքով:

Այս տողերով մեր երախտագիտութեան դոյզն հաւաստիքը կ'ուզենք բերել ուրիշ մեծանուն և բարեգործ անձնաւորութեան մը, Ս. Աթուոյս պատուական բարեկամ և բարերար ՎՍԵՄ. ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻ: Վստահ ենք թէ թարգման հանդիսանալով Ս. Յակոբեանց ուխտանուէր Միաբանութեան և Պաղեստինի մերազն ժողովուրդի սերտ և սեռն երախտագիտութեան, այսու չենք վիրաւորեր հանրածանօթ ազնուական իր համեստութիւնը:

Ականաւոր հայը, մեր ժողովուրդին ժամանակակից ամենէն պատկառելի և բացառիկ արժէք ներկայացնող դէմքերէն մին է: Մեծ է ան իր ծագումով, իր ծնունդով, իր կեանքով և իր գործով:

Ծագումովը. որովհետեւ Կիւլպէնկեանք Արեւելեան Հայաստանէն Կեսաւրիա փոխադրուած, այդ պատուական հայաչէն կեդրոնին մէջ և այլուր փայլեցուցին իրենց տոհմիկ ձիրքերը: Իսկ ըստ իրենց տոհմային աւանդական տարեգրութիւններու, անոնք կը սերին Վարդ-Պատրիկ Ռշտունիէն:

Ծնունդովը. որովհետեւ շառաւիղն է Կիւլապի Զէլէպիի, որ իր մեծ հայրն էր, և զաւակը Սարգիս Կիւլպէնկեանի, որ շնորհիւ իր առեւտրական ձեռներէցութեան և հանճարին, համազգային նշանակութեան և համբաւի պիտի բարձրացնէր իր գերդաստանին արդէն բազմածանօթ անունը: Իսկ ինքը, արժանաւոր և գերազանց յաջորդը իր հօր, միջազգային ուշադրութեան ու պատմութեան պիտի յանձնէր հայ անունը:

Կեանքովը. հոս անվերապահօրէն պէտք է յայտարարել թէ անհատներու կենսադրութեան մէջ դուն ուրեք կարելի է տեսնել որ պատուոյ մէջ և դիրքերովրայ յառաջդիմութիւնը զուգընթաց եղած ըլլայ զուտ անձնական արժանիքի և մեծ տաղանդի, այնպէս՝ ինչպէս կը հաստատուի Վսեմ. Գալուստ Կիւլպէնկեանի պարագային:

Իր կեանքը, տեսարան մը ըլլալէ աւելի, զիրք մը ու փառք մըն է մասնաւոր: Զայն դիտելով, հրճուելէ աւելի կը սորվի մարդ, այսինքն կ'աճի փորձառութեամբ և հողիով միանպամայն:

Ձեռք ուղեր ծանրանալ իր բեղուն կեանքի այն մանրամասնութիւններուն առջև, որոնք կրնան երկարել նման անձնաւորութիւններուն կենսազրութեան զիծը: Պզտիկ հասակէն եկած է Կ. Պոլիս և հոն ստացած իր ուսումը: 19 տարեկանին կը մեկնի Մանչէսթըր, վարելու համար Կիւլպէնկեան Վաճառականական Տան գործերը: Սակայն առեւտրականի սուր բնագոյով և իր տոհմին յատուկ եղող նախաձեռնութեամբ, իր ուշադրութեան առարկան ըրաւ առաջին մէկ օրէն քարիւղի և գորգի գործերը, նախատեսելով անոնց ապագայ զարգացումը: Այս շահազրգոութիւնը զինք մղեց Կովկաս, ապա Պաղու, ուսումնասիրութեան համար: Վերադարձին հրատարակեց երկու ուսումնասիրութիւններ, *La Peninsule d'Apcheron et le Pétrole Russe* և *La Transcaucasie et le Peninsule d'Apcheron, Souvenir de Voyage*.

Յետոյ զրեց նոյնպէս *La Fabrication des Tapis en Orient* խորագրով գործ մը, որ ցոյց կուտայ սլաւոնական գորգերու մասնագէտի իր կարողութիւնը:

Նորին Վսեմութիւնը 1899ին գործակցեցաւ Ռօյելը Տըշ քարիւղի ընկերութեան հիմնադիրներէն Սըր Հէնրի Տէթէրտինկի, անոր սկզբնական օրերուն և անոր հմուտ խորհրդականը դարձաւ: Մեծապէս օգնեց այս վերջինին Ռօճիլտի հետ ձեռնարկած իր գործը զուլի հանելու համար:

Կովկասէն վերջ Կիւլպէնկեան շուտով նախագգաց այն կարեւոր դերը, որ վերապահուած էր Մոսկուի: Երբ Առաջին Մեծ Պատերազմի յայտարարութենէն քանի մը ամիսներ առաջ, բանակցութիւններ սկսան Անգլիոյ և Թուրքիոյ միջև ձեռք բերելու համար այս վերջինին քարիւղի ընկերութիւններու դրամագլուխի կէսին իրաւունքը, Կիւլպէնկեան եղաւ այդ բանակցութիւններու զբաղակար առանցքը: Իր աշխատանքները այնքան լաւ զնահատուեցան, որ Տէթէրտինկ և Անգլ. Կառավարութիւնը անոր զիջան թրքական քարիւղի ընկերութիւններու արժեթուղթերու 5 առ հարիւրը: Սակայն այս բոլոր յաջողութիւնները իրական և արդար մրցանիշներ իրեն համար, եղան իմասններ կարծես աւելի աշխատութեան և արդիւնաւորումի:

Հարստութիւն գիզելէ աւելի, հարստութեան ի հաշիւ իր պայքարը, վեր կը հանէ իր մէջ մէկ ձողմէնառեւտրական տաղանդ և միւս կողմէն ճշմարիտ «ձեռնարկումը», ինչ որ կը հաստատեն այսօր առեւտրական ասպարէզի իր հակառակորդները: Բոլոր այս յաջողութեանքներու մէջ, իր հանձարը մեծագոյն նպաստը բերաւ դարազրուի կազմող այն հսկայ դրամական ու ճարտարարուեստական ձեռնարկներու մէջ: Երբ իր ազգակիցներէն քիչեր տակաւին զիտէին իր այս մեծ նուաճումներու մասին, օտարները իր մէջ ճանչցան ու յարգանքով մատնանիչ ըրին ուշիմ, զիտուն, գործնամիտ և անմրցելի հայր:

Հասարակ տեղիքի մը չափ սովորական դարձած ասութիւն մը եղած է մեր մէջ ըսել թէ՝ մեր մեծ դրամատէրները շատ յաճախ ժլատ են եղած իրենց ազգին կարիքներուն նկատմամբ: Եւ սակայն միւս կողմէն իրողութիւն է թէ ինչ որ մենք ունեցած ենք անցեալին մէջ, և ունինք այսօր, արդիւնքներն են անոնց, որոնք միշտ զիտցած են մեր իմացական և հոգեկան անդաստանները յարգարել և ապահովել զանոնք իրենց իշխանական նուիրատուութիւններովը: Եթէ նկատի առնենք մեր պատմութեան կանխող դարը, և մեր ազգային կեանքի

վերջի շրջանները միայն, հաշուելով արդիւնքները հոգեկան այդ բխումին, Գէորգեան, Ներսէսեան, Լազարեան, Սանասարեան, Կիւլպէնկեան, Մելքոնեան, Եղիայեան, Նուպարեան անուններով ծանօթ, մատնանշած կ'ըլլանք այս մեծ իրողութիւնը։ Այրիներուն լուսաներու շնորհիւ անտարակոյս թէ վառած է և կը վառի մեր Եկեղեցւոյ կանթեղը, ժողովուրդի մը զոհողութեան ճիգին և ոգիին թթխման է ան։ Սակայն եթէ թերթենք մեր Եկեղեցիներու, դպրոցներու և ազգային հաստատութիւններու յիշատակարանները, պիտի տեսնենք թէ անոնց մեծ մասը, չըսելու համար բոլորը, զոյաւորուած են իշխանական նուէրներով մեծ մեկենասներուն, որոնք մեր ժողովուրդի ընտանին կազմած են։ Մեր բոլոր Եկեղեցիներու հովանիին տակ, և դպրոցներու դաւիթներուն մէջ, առհասարակ կը տեսնուի արձանագրութիւնը կամ կը բարձրանայ արձանը անոնց՝ որոնք կերտած են հոգիի ու մտքի այդ յուշարձանները ի վայելումն և ի փառս իրենց ազգին և Աստուծոյ։

Վսեմ. Գալուստ Կիւլպէնկեան մին է անտարակոյս ազգային այդ պարծանքներէն, իրեն միջազգային համբաւի արժանացած անհատ և ազգային բարերար, և որ սակայն զիտէ դիմաւորել իր ժողովուրդին պէտքերը կիրթ և աղանդական զգացումներու և դատումի մը մէջէն։ Բարձր մտաւորական, որ վարժուած է մտածելու իր ժողովուրդի մնայուն և բարձրագոյն կարիքներու հաշւոյն, չէ մտածած երբեք ի խնդիր անուան կամ համբաւի, վասնզի փառասիրութիւնը անծանօթ է իր հոգիին։

Իրեն համար դրամը բախտ մը և ուժ մը չէ միայն, այլ արժէք մը՝ կիրարկուելու արժէքներուն ի խնդիր և արժեւորելու զանոնք։ Ի վերջոյ բարիքը չէ որ կը մեծցնէ մարդս, այլ մարդն է որ կ'արժեւորէ և կը մեծցնէ՝ բարիքը։ Անոր համար ինք կը խորշի ցոյցերէ և փառասիրութիւններէ, իր անձին թըմբուելով աշխարհը լեցնելու ընդմտտաբար իղձէն, իր բարձրօրէն մշակուած միտքն ու առաքինի հոգին չեն կրնար հանդուրժել նման մակերեսային զգացումներով զբաղելու և զբաղեցնելու տատանքին։ Վասնզի փառք արհամարհողները միայն ստուգապէս կը փառաւորուին։ անոնք կը փախչին փառքէն, բայց փառքը միշտ պիտի գտնէ զիրենք անվրէպ։ Առաքինութեան շուքն է փառքը որ անբաժան է միշտ անկէ։ Մրցուզ հոգիներու զործ է հետեւաբար փոքրութիւններ փնտռել միշտ մեծութիւններու մէջ։ «Մեր փառքն ու պարծանքը մեր խղճին վկայութիւնը միայն պէտք է ըլլայ» կ'ըսէ առաքեալը։

Իր նկարագրին մէկ ուրիշ գիծն է իմաստութիւնը, կամ, այս բառին աւելի զործնական առումով, ողջմտութիւնը։ Իր բարերարելու կերպին մէջ ոչ միայն բարիքի իմաստասիրութիւնը կը նշմարուի, այլ, ինչպէս ըսինք, իր բարերարելու կերպը բարիքները դիմաւորելու չէ որ կը ձգտի այնքան՝ որքան բարիքները յաւերժելու։ Իր գեղազէտ միտքն ու հոգին, միջազգային մրցակցութիւններու մէջ կուսուած իր կամքը, դիրք մը շինելու և մանաւանդ զայն կարենալ պահպուել իր յաջողութիւնները, զինք մնայուն և անսողիւտ արժէքներու հետամուտ միտք մը դարձուցեր են, ու երբ ներկայացած է առիթը այս կարգի արժէքներուն ի խնդիր զոհելու, Վսեմ. Գալուստ Կիւլպէնկեան պատրաստ եղած է միշտ։

Երբ խօսք եղած է իր ներկայութեան, մեր ազգային կարիքները հոգա-

լու և մեր մտքին ու հոգիին անդաստանները բարդաւաճելու, իր մտքին ու զգացումին սլաքը ուղղուած է միշտ Երուսաղէմին և Էջմիածնին, այն միակ զոյգ Հաստատութիւններուն՝ որոնք լուսաւոր և բախտորոշ դեր մը ունեցած են և ունին մեր գոյութեան ու մշտնջենաւորման մէջ։ Ս. Աթոռոյս բարեկամն ու բարերարը կը հաւատայ թէ Երուսաղէմն ու Էջմիածինը միայն կրնան կատարել կրօնական, կրթական և ազգային բարերար այդ դերը մեր ժողովրդի այժմեան կացութեան մէջ, փրկելով և երկարաձգելով մեր ազգային կրօնական և մշակութային արժէքները, ատով ապահովելու և տեւականացնելու մեր գոյութիւնը։

Այս զոյգ Հաստատութիւնները եղած են միշտ հայ ժողովուրդին համար հայրենի հող և անկիւն, ուր բարախած է միշտ մեր ժողովուրդին սիրտը, ներարկելով սերունդէ սերունդ մեր պապերուն կենսաւէտ հաւատքն ու արիւնը։ Այդ Հաստատութիւններէն միոյն, Երուսաղէմի Ս. Յակոբեանց լայնախարիսխ ու ազգապարծան մենաստանին մէջն է որ կը բարձրանայ Ս. Աթոռոյս Կիւլպէնկեան Մասենադարանը, կառուցուած ի յիշատակ իր երջանիկ ծնողներու, տաղաւարելով իր մէջ կրօնքի, կրթութեան և գրականութեան, երրակի սրբութեամբ նուիրագործուած զանձերը։

Կիւլպէնկեան Մասենադարանին գոյութիւնը ազգային բարիք մըն է, և այդ բարիքին բարերարութիւնը մշտաւ երախտագիտութեան կը մղէ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը և ազգը։ Իսկ բարերարը և իր ու իր զերդաստանին անունը միշտ մշտանորոգ կենդանութեամբ յաւերժող Մատենադարանը կը բազմին Միաբանութեան սրտին մէջ, և աչքին առջև, իրենց զաւապարական ու սրտառուչ զեղեցկութեամբ։ Այս առիթով մեր փառաբանութիւններն ու երախտախառն օրհնութիւնները բոլոր անոնց՝ որոնք զիացան ու զիտեն իրենց հետաքրքրութեան առարկայ դարձնել Հայ Եկեղեցին, Հայ դպրոցն ու կրթական հաստատութիւնները, և արժեւորել զանոնք նման իշխանական նուիրատուութիւններով։

Պաղեստինի աղէտին հետեւանքովը, Ս. Աթոռոյ և անոր շուրջ ապաստան գտած մերազն ժողովուրդին նիւթական կարիքներուն ի նպաստ, նորին Վսեմութիւնը այս երկու տարուան ընթացքին, հինգ անգամներ պարբերաբար, իշխանական նպաստներ ղրկեց Ս. Աթոռ։ Այս առիթով նորին Վսեմութեան Ս. Աթոռոյ պատուական բարեկամին և բարերարին կը յայտնենք մեր, և Երուսաղէմի մերազն ժողովուրդի ջերմագին երախտագիտութիւնը, մաղթելով ի սրտէ որ Տէրը վարձահատոյց ըլլայ, և մէկին փոխարէն հազարներ պարգեւէ իրեն։ Օրհնէնք յիշատակին իր ծնողաց և յարգանք ու լաւագոյն մաղթանքները Ս. Աթոռոյ Միաբանութենէն իր մեծ բարերարին՝

ՎՍԵՄ. ԳԱԼՈՒՍ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆԻՆ։


Կ Ի Ի Լ Պ Է Ն Կ Ե Ա Ն Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն

(ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ)

Ամէն ձեռնարկ, որքան ալ բարի և ազնիւ, դատապարտուած է մնալու յաւէտ ծրագրային վիճակի մէջ, մեզ պէս կործանած «ածու փոքր» ժողովուրդի մը մէջ, եթէ չգտնուին, հրաշալի կարգադրութեամբը Բարձրեալին, միանգամայն սրտով վեհ, մտքով բարձր և գանձով ճոխ անձնաւորութիւններ: Խնկելի Ս. Սահակ-Մեսրոպներու տեսիլները՝ տեսիլք պիտի մնային եթէ օրուան երկրաչէն վեհապետը՝ Վռամ շապուհ թագաւոր, լայնօրէն բացած չլլար արքունի գանձը, հովանաւորելով հնարաւորութիւն տուած չլլար անոնց՝ իրակաւութեան կոչելու իրենց գաղափարականը, ազգային փրկագործութեան մեծ գէպքը: Վռամ շապուհ թագաւորը նոյնքան և զուցէ

մէջ, ցուցարեւելով խելք, կորով և յամառ աշխատանք, պատուարեր յաղթանակներ տարած են և բարձր բռնած հայուն անունը, ի սփիւռոս աշխարհի, տեւականացնելով անոր բարի համբաւը միջոցին և ժամանակին մէջ:

Վսեմաւոր Գալուստ Պէյ Կիւլպէնկեան՝ հովանաւոր այդ ցցուն հայ բարձրութիւններէն մին է ահա, Կիւլպէնկեան բարեհամբաւ տոհմին մէկ ազնիւ շառաւիղը որ մեր աղքատ ազգին անկարելի գոհողութիւն պահանջող հաւաքական գոյութեան գերագոյն պէտքերէն մէկը հոգացած է, գովելի ազգասիրութեամբ, հաստատելով և տեւապէս մեկենասելով իր անուան Ս. Աթոռոյս հոյակապ Մատենադարանը:



աւելի երախտադիտութեան կը կանչէ բոլոր հայ սերունդները:

Հայը անկորնչելի մնացած է, բաղժաւ դարեան իր տառապանքներուն մէջ, շնորհիւ իր ցցուն բարձրութիւններուն՝ արուեստագէտներ, պետական մարդիկ, գէնքի ասպետներ և մանաւանդ վաճառականներ, որոնք բնաշխարհի մէջ թէ օտար հորիզոններու տակ, մրցակցութեան և պայքարի

Այսօր հայ ժողովուրդը կը հրճուի և կը հպարտանայ այս նուիրական հաստատութիւնով որ Ս. Աթոռին փառքերէն մին կը կաղմէ կողքին մտքի միւս վառարաններուն՝ զոյգ վարժարաններ և տպարան:

Յաւիտենական Երուսաղէմի յաւիտենապէս անսասան Սրբոց Յակոբեանց Աթոռին՝ վեհանձն առատաձեռնութեամբ, Վսեմ Տիար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի նուիր-

րած այս պանծալի լուսոյ վառարանը պիտի մնայ, Հայկական Սինոնի վրայ, իբրև յաւերտենական կոթող, մշտնջենաւորելով շընորհակալական և երախտագիտական անկեղծ զգացումները բոլոր անոնց որ հոն կը գիմեն ճշմարտութեան լոյսին ի խնդիր:

Պատմական ամփոփի ակնարկ. — Նոյին Վսեմութեան իշխանական նուիրատուութեամբ կանգնած է այս հոյաշէն պալատը գիրքերու, ի յիշատակ իր հանգուցեալ ծնողաց՝ Սարգսի և Տիրուհւոյ, միջնորդութեամբ Երանաշնորհ Թորգոմ Սըրբազանի՝ այն ատեն պատուակալ նախագահ մեծանուն Դուրեան Պատրիարքի Յորելիական Կեդրոնական Յանձնախումբի:

Լեւոն Գէորգեանէ (բարերարին ներկայացուցիչը) և հանգուցեալ Տիար Կարապետ Նուրեանէ:

1929 Հոկտ. 26-ին, Շաբաթ, յետ երեկոյեան ժամերգութեան Ամենապատիւ Յորելիար Դուրեան Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ վեց եպիսկոպոսներու, անձամբ կը կատարէ հիմնարկէքի առաջին օրհնութիւնը: Բուն հիմնարկէքը եկեղեցական արարողութեամբ կատարուած է 28 Օգոստ. 1930-ին Ամեն. Դուրեան Պատրիարքի մահէն ետք (27 Ապրիլ 1930):

Շինութիւններն աւարտած են 1931 Յուլիսին. չափերն են 18 մեթր լայնք, 23 մեթր խորք, 10 մեթր բարձր. չէնքը՝ երկյարկանի է, մէջտեղը մեծ սրահ մը,



Լուսանկարուած՝ Կիւլպէնկեան Մասենադարանի ներքնասրահի
Ս. Աթոռոյս Բարերար Վսեմ, Գալուս Պեյ Կիւլպէնկեանի հօր Կիսանդրիին առջեւ:

Շինութեանց ճարտարապետը եղած է Միւսիւ Ֆայթէլսօն, յանձնառուները եղած են հայազգի Տեարք Մերկեր Մերկերեան և Գէորգ Սահակեան, կառուցման հսկողութիւնը կատարուած է յատուկ յանձնախումբով բաղկացած Երջանկայիշատակ Գեր. Տ. Մեսրոպ Եպս. Նշանեանէ, Գեր. Տ. Մատթէոս Եպս. Գայրգճեանէ, Մեծ. Տիար

Հուրջպատի նրբանցքներէն զատ՝ ութ սենեակ՝ մասնաւոր մատենադարաններ, և միւզէի յատուկ սրահ մը, Արժած է 7000 սթերլին:

Բացման ճոխ և վայելուչ հանդիսութիւնը տեղի ունեցած է 23 Նոյ. 1932-ին, Սրբոց Թարգմանչաց տօնին առթիւ, նախագահութեամբ օրուան պատրիարքին,

ընտիր հրաւիրեալներու ներկայութեան:

Ամէն տարի, Ս. Գրոց Թարգմանութեան և Հայոց Նշանագրաց Գիւտի տօնին առթիւ, յետ Ս. Պատարագի, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, հոգեհանգըստեան հանդիսաւոր պաշտօն կը կատարուի վասն հոգւոց Սարգսի և Տիրուհւոյ Կիւլպէնկեանի ծնողաց բարերարին, այս արարողութիւնն ալ մաս կը կազմէ Ս. Աթոռի Օրացոյցին:

Տեսուչներ. — Առաջին անպաշտօն գըրադարանապետը եղած է Տ. Թորգոմ Պատ. որ իր խիճ ձեռքերով ամփոփած, տեսակաւորած և դասաւորած է գիրքերը, թողլով բուն գիտական և վերջնական դասա-

դասաւորած է գիրքերը Տասնորդական Դիւթ (System Dewey) որ գիտական արհիական յարմարագոյն դրութիւնն է:

2. Տ. Արքուն վրդ. Հասիսեան

3. Տ. Գրիգոր վրդ. Ոսկանեան

որոնք շարունակած են սկսուած գործը:

4. Տ. Տիրայր վրդ. Տերվիսեան և Փոխ Տեսուչ Տ. Միւռոն վրդ. Կրնիկեան, որոնց օրով, յետին ծայր բծախնդրութեամբ, ամփոփուած և դասաւորուած են, ըստ ընկալեալ դրութեան, 400 տեսակ թերթեր, հանդէսներ և 2500 գիրքեր:

Գիրքեր. — Զետեղուած են պողպատեայ դարակներու մէջ, յատկապէս բերուած Ամերիկայէն, Գալիլի գրադարաններուն



Գերապափա Տեղապան Տ. Եղիշ վրդ. Տերտեան եղապատուած Միաբան Հայրերէ, Գործնայ Սարկաւագներէ եւ Ժառանգաւորաց Սաներէ՝ Մասնադարանի դրան առջեւ:

ւորման աշխատանքները յաջորդելիք տեսուչներուն: Յետոյ վանական իշխանութիւնը նշանակած է կարգով հետեւեալ տեսուչները:

1. Տ. Կիւրեղ վրդ. Խալայեան (երջանկայիշատակ Պատրիարքը) որ ամերիկացի Հայր Պրիմէնի աշխատակցութեամբ

մէջ գործածուածներուն յար և նմանները՝ կան 30,000 գիրք (Զեռագրաց Մատենադարանը կը Ֆայ անջատ), իմաստասիրական, կրօնական, ընկերային, լեզուաբանական, գիտական, պատմական, աշխարհագրական, կենսագրական: Այս գիրքերուն կէսը հայերէն, միւս կէսը՝ օտար լեզուով:

ուր կը տիրեն յաջորդաբար անգլիերէն, ֆրանսերէն և այլն: Գիրքերուն թիւը կը ճոխանայ հետզհետէ, տարեկան շուրջ 5-600 հատորով, հեղինակներու, հրատարակիչներու կամ այլ ազգայիններու ըրած նուէրներով՝ ուղղակի Մատենադարանին կամ անուղղակի վանքիս պաշտօնաթերթ՝ ՍԻՈՆ-ին, գնումներով եւ թողոններով: Գնումներու ժամանակ մասնաւոր ուշադրութեան կ'արժանանան հայերէն գիրքերը, հանդիսներու և քերթերու հաւաքածոները որոնց մէջ կը պարունակուին մեր ազգային մշակոյթի արտադրութիւնները գրեթէ ամբողջութեամբ, հայ հրատարակչական տեւական ընկերութեան մը ամօթալի չգոյութեան հետեւանքով:

Գիրքերու թիւին այս արագ աճումով հասկնալի կը դառնայ դատկներու պակասը: այժմու մեր ունեցածները արդէն չեն բաւարարեր ստեղծուած պէտքերն: Տախտակ դարակներու անյարմարութիւնը իմանալի է ինքեան, անոնց՝ գոյութիւն ունեցող պողպատեայ գեղեցիկ դարակներու հետ ներկայացնելիք աններդաշնակութենէն զատ:

Բուն գիրքերու մէջ, հայագիտութեան, ազգ. պատմութեան վերաբերեալ տոհմիկ և օտար մատեններու դարմանելի պակասը եւս աչքառու է:

Նորին Վսեմութիւն՝ Գալուստ Պէյ Կիւլ-պէնկեան փափաքելով որ իր Մատենադարանը հանդիսանայ իմացական կեդրոն ըսփուռքային տարողութեամբ իսկ, պարբերաբար կ'օժտէ զայն նոր հրատարակութիւններով: 1948ին միայն նուիրեց 40 հատոր հազուագիւտ նոր գիրքեր, որոնք կը զիւրացնեն ուսումնասիրութիւնները ոչ միայն Միաբանութեանս եւ պաշտօնէութեանս, այլ և Մատենադարանս օգտագործող անհատներուն:

Պաղեստինեան տագնապի օրերուն. — Պաղեստինեան տագնապի առաջին օրէն սկսեալ հայոց վանքը ակամայ վտանդի կեդրոն դարձաւ, մարտական առաջին գիծին մէջ ինկաւ. և իր կամարներուն տակ ամփոփուած բովանդակ անմեղ երուսաղէ-մահայութիւնը, ցմրուր քամելով դառն և մահացու բաժակներ, անմոռնջ վճարեց զհարեութեան իր տուրքը Ս. Երկրի խաղաղութեան և անոր այլամերժ ժողովուրդներու հաճութեան համար: Մինչ այդ ժողովուրդին անձանթ ամէն տեսակ հրանթներու տեղատարափ մը սկսաւ բովան-

դակ քաղաքին վրայ, երկրաշարժային ազդեցութեամբ, և մասնաւորաբար Հայոց Թաղին վրայ, սփռելով մահ և աւերածութիւն: Պատերազմի սարսափէն ու արհաւիրքէն զատ, պահ մը, կոտորածի մը զձաւանջն ալ ապրեցաւ մեր դժբախտ ժողովուրդը, հակահայ չարամիտ տարածայնութեան հետեւանքով, որ, յետոյ, չըջուն բարձրախօսով հերքուեցաւ ն. վեհափառութիւն Ապտալա Թագաւորին զօրականներէն՝ Ապտալա Պէյ էլ-Թէլի հրամանով:

Այս խելայեղ ոմբակոծութեանց մէջէն բախտաւոր պրծաւ Կիւլպէնկեան Մատենադարանը, որուն անմիջական շրջապատին վրայ շատ ուռմբեր և թռչող հսկայ ականներ ինկան, փնտսելով Մատենադարանին բաղմամբի պատուհաններուն և մուտքի մեծ դրան: Բարեբախտաբար ուղղակի չէնքին (որուն տանիքը ապակեայ 5 մեծ լուսամուտներու զոյութեամբ շատ խոցելի կը դառնար) վրայ չինկաւ այդ աւերիչ ականներէն, որով անդամանելի աւերութիւններէ զերծ մնաց Մատենադարանը, որուն կրած փնտսներն են՝

1⁰. Տանէր — ասֆալթը ճեղքուած շատ մը տեղերէ:

2⁰. Թանգարան — հարաւային պատուհանը մասնաւորաբար ջախջախուած՝ ապաժուրով, երկաթ վանդակով և փեղկերով, պղտիկ քրէլէրի մը ուղղակի հարուածէն:

3⁰. 52 դարձահաններ — երկաթեայ ապաժուրները ծակծկուած, տախտակ ապաժուրները ջախջախուած, և ապաժուրներու սնտուկները խախտած, շատերը անգործածելի ըլլալու աստիճան:

4⁰. Մարտի դռն — երկաթեայ թէև տակաւին գործածելի բայց սաստիկ փնտուած, բակին մէջ ինկած բաղմամբի ուռմբերու շեղբերէն:

5⁰. Տեղաբան — պատուհանը ապաժուրով, երկաթ վանդակով և փեղկերով ջարդուիչուր եղած, նաեւ պատուհանին մերձակայ պատի մասեր սաստիկ փնտուած, միակ մեծ ուռմբի մը ուղղակի հարուածէն, միւս պատերը եւ խախտած են — սիւնները անփնաս — ուռմբերուն յառաջացուցած օդի սաստիկ ճնշումէն:

Այս փնտսները՝ վանական պատկան իշխանութեան ուշադրութեան յանձնուած են պատշաճ տնօրէնութեան խնդրանքով:

ՊԱՐԿԵՒ ԵՒՐ ԵՌՎԶԱՆՆԵՍԵԱՆ
(Բարեւոյար Մատենադարանի)

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿՐՕՆԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

ՓՈԽԱԿԵՐՊԱԿԱՆՆԵՐՈՒ (Transformiste)

ՏԵՍՈՒԹԻՒՆԸ



բ) Տարօրինակ հակադրություններ մը, սակայն, մինչ մարդ մէկ կողմէն կը տեսնուի ընկուզուիլ Աստուծոյ մէջ, միւս կողմէ ոչ նուազ աննուաճ կերպով մը ինքն իսկ ինքզինքը կը շեշտէ Աստուծոյ հանդէպ թէ՛ և կախում ունեցող էակ, բայց ինքզինքը ինքնօրէն և իր ճակատագրին տէր լինելը զգալուն մէջ է որ կ'ուզէ տեսնել իր փառքը: Խնդրոյն նոյնքան կարեւոր միւս երեսին՝ զուտ բարոյական զիտակցութեան կամ ազատութեան կէտին է որ կը հասնինք այժմ: Ժամանակակից դարաշրջանին սկիզբը, այս հարցը հիանալիօրէն ի լոյս ածուցաւ Քանդի կողմէ, որուն փիլիսոփայական դրութիւնն է զոր հոս պիտի ընենք մեկնակէտ մը նկատողութիւններուն: Բանական կալուածին որ և է գերզգալի ծանօթութիւնը մերժելէ վերջ. այս իմաստասէրը, ինչպէս յայտնի է, նորէն անոր կը դառնայ բարոյականի մեթոտով, ու պարտականութեան իրականութեան վրայ հիմնուելով, կը հաստատէ ազատութիւնը, Աստուծոյ գոյութիւնը և հոգւոյ անմահութիւնը: Ահաւասիկ հակիրճ յուշածութեամբ մը, անոր փաստարկութեան ընթացքը: Եթէ տեսական բանը կը վերլուծէ զգայութիւնը գործնական բանն ալ ճամբայ կ'ենէ գործէն, այսինքն կեանքէն: Զգալի ըմբռնումը հարկին կապուած է, անոր մէջ առաջ բերած գաղափարները խստիւ չզթալուած են իրարու հետ: Անընդհատ թեզան մըն է անիկա, որուն ցանցը մեզի է փաթթուած: Մարդ իր կամքով միայն կրնայ խուսափիլ այս որոշադրականութենէն (déterminisme) ու ոտքը դնել ազատութեան ծառին վրայ: Բայց այդ կամքը՝ քմահաճոյքին չենթարկուիլ, անիկա ենթակա է կանոններու՝ զորս Քանդ կը կոչէ Դորմանական սկզբունքներ, և որոնք երկու խումբի կը ստորա-

բաժնուին. առաձներ (maximes) որոնք ենթակայական դատողութիւն մը միայն ունին, և այն օրէնքները, որոնց արժէքը առարկայական է և զոր Քանդ կը կոչէ հրամայական (imperatif): Այս հրամայականներն ալ իրենց կարգին, կրնան նկատուիլ թէ՛ իբրեւ վարկածական (hypothétique), եթէ իրենց առարկայական նկարագիրը նոյն չը մնաց միշտ, և թէ՛ ստորոգական (catégorique), եթէ անոնց կիրարկութիւնը տրեղեքական է: Ստորոգական հրամայականը գերազոյն օրէնքն է, պարտաւորիչ՝ բոլոր բարոյական էականներուն: Հոս հիմակ նկատողութեան պիտի չառնենք թէ ինչ է անոնց պարունակութիւնը, կամ թէ ինչ կը հրամայէ մեզի այդ կանոնը, բաւականանանք քննելով միայն թէ ինչ երեւոյթով կը ներկայանայ ան մեզի:

Իբրեւզգուտ ձեւ, զմեզ հնազանդութեան պարտադրող օրէնքը արտաքոյ է զգայութենէն, և անոր յատկաւորումէն: Եթէ անկից կախեալ ըլլայ, բոլոր կարելի պարագաներուն համապատասխան ձեւ մը պիտի չըլլար, զգայարաններու աշխարհէն գալով, մասնաւոր պարունակութիւն մը պիտի ունենար, այսինքն բացարձակ ըսկըզբունք՝ ստորոգական հրամայական պիտի չըլլար: Բայց քանի որ զգայութիւնը երեւոյթներու կամ հարկի ոլորտն է, բարոյական օրէնքը, որ ազատ է զգայութենէն, ազատ կ'ըլլայ նաեւ անոր կապուած չզթալումէն: Խորհող մարդուն համար՝ ստորոգական հրամայական է ազատութեան անսասան հիմը:

Քանդ կը պնդէ որ կարգը պահուի և ոչ թէ հակառակը: Մենք, կ'ըսէ ոչ թէ նախ ազատութեան և յետոյ բարոյական օրէնքին զիտակցութիւնը ունինք, այլ ունինք նախ բարոյական օրէնքին և յետոյ, բարոյական օրէնքով, ազատութեան զիտակցութիւնը: Իբրեւ ժխտական իմացք, իբրեւ հարկէն ազատագրումի իմացք, ազատութիւնը պիտի չկրնար անմիջական փորձառութեան առարկայ մը ըլլալ: Արդ՝ քանի որ մենք զայն զգայարաններէ ալ չենք կը քաղենք, ազատութիւնը ուրեմն նախական բան մը չէ, այլ ընդհակառակն, Աստուածացեալ բան մը: Այն՝ որուն զիտակցութիւնը ունինք, յարկաւորութիւնը երեւոյթներէն անկախաբար նկատի առած

ատեննիս, մեր «Օրէնսդրական բանը» կամ մեր մէջ եղած ստորոգական հրամայականն է: Բայց ինչպէս որ Քանդիր գործին չարունակութեանը մէջ կը ցուցնէ, այդ հրամայական ստորոգականը կ'ենթադրէ ազատութիւնը, վասնզի պարտականութեան օրէնքը զմեզ կը կորզէ զգալի փորձառութեան կապանքներէն, անմահութիւնը, վասնզի այդ կանոնին վրայ հիմնուած հոգեւոր տիեզերքը իր լիուլի զարգացում չունի այս աշխարհի վրայ ու վերջապէս Աստուծոյ գոյութիւնը, վասնզի, բարոյական աշխարհը երեւակայութիւն մը ըլլալով, պէտք է գոյ ըլլայ գերազոյն կերպով անկախ բարի մը, որ Դերազոյն էական է միայն: Ահաւասիկ հիմակ նկարագիրները պարտականութեան այս օրէնքին, որ արմատն է մարդուն բովանդակ գործունէութեան.

ա) Նախ տիեզերական տարողութիւն մը ունի «Դործէ այնպէս որ, կ'ըսէ ան, քու կամքիդ պատուէրը օրէնսդրական ըսկըդունք մը կարենայ ըլլալ ամենուն համար»: Պարզ է որ այս կանոնը ձեւական արժէք մը ունի, այսինքն զմեզ կը կապէ վեհագոյն պարտականութեան, բայց մեզի չըսեր թէ ինչ է բարին զոր պէտք է կատարենք: Յաճախ մեղադրած են, ու յանձնարար, Քանդեան փիլիսոփայութեան այս թերոյթը:

բ) Դրութեան մէկ ուրիշ կարեւոր յատկաւորումն է կամքին և տիեզերական բարոյական օրէնքին միջև հաստատուած ազերսը: Մարդ իր մէջ կը գտնէ այս պատուէրը. ու միակ կանոնն է ան որուն ինքզինքը բացարձակապէս կապուած կը զգայ: Ուրիշ խօսքով, անձնաւոր էական կամքը ինքնօրէն է, որ եւ է ուրիշ հեղինակութեան միջամտութիւնը պէտք է անպայման ի բաց մերժուի իբրեւ օտար տարր: Պէտք է որ բարոյական ենթական կատարէ իր պարտականութիւնը, ոչ թէ մարդոց կամ Աստուծոյ հաճութեան արժանանալու համար այլ որովհետեւ իր պարտականութիւնն է ան, իր միակ-գերագոյն օրէնքը: Այս ինքնօրինութիւնը, ինչպէս կ'ըմբռնէ զայն Քանդ, կ'իրականացնէ ազատութիւնը՝ այս բառին երկու առումներով. ժխտական կամ արտաքին ամէն ազդեցութիւնէ անկախութիւն իմաստով և զրական իմաստով, որուն համեմատ գործնական բանն է որ ինք իսկ կը

կանոնաւորէ մեր կեանքը, մեզի թելադրելով իր օրէնքները:

Գ. — Ըստ այս տեսութեան, կրօնքը կ'ընկուզուի բարոյականին մէջ, ինքն ոչ այլ ինչ ըլլալով եթէ ոչ ծանօթութիւնը իբրեւ Աստուածային հրաման ըմբռնուած պարտաւորութիւններուն: Այս ըսել չէ թէ Աստուած կը յայտնուի իր պատուիրանները հարկադրելով մարդուն: Այլ քանի որ իւրաքանչիւր անձնաւոր էականաւորիչ սկիզբը նոյն ատեն ուրիշներուն ալ է, ստորոգական հրամայականին այս տիեզերական նկարագիրը կը բացայայտէ գերագոյն միութիւնը բարոյական աշխարհին, և անոր մէջ արտայայտուած վեհագոյն բարին: Աստուծոյ միջամտութիւնը այս պարագային մէջ, տիրապէս խօսելով օտարութիւն մը մը գործ չէ. օրէնսդրական բանին տիեզերականութիւնն է ան՝ որ կը հաստատուի կրօնքին մէջ:

Ահաւասիկ, արագ համոզօտումով մը, տեսակէտը գերման փիլիսոփային, որ զմեզ մէկ անգամէն կը փոխադրէ Շլէյերմախերի աստուածաբանական իմացումին բոլորովին հակառակ կէտի մը վրայ: Ըստ Քանդեան տեսութեան, արդարեւ մարդ իր անձը չի նուիրեր Աստուծոյ վասնզի աստուած բառն անգամ ուրիշ բան չէ բայց եթէ անուանումը միեւնոյն մարդուն գերագոյն ինքնօրինութեան: Մարդ ինքն իր մէջ է որ կը գտնէ իր կեանքին կանոնաւորիչ սկիզբը, և այս սկիզբին ծանօթութիւնը անոր կը յայտնէ իր ազատութիւնը: Այս ըլլալով սոյն հռչակաւոր դրութեան կեդրոնական ներհայեցողութիւնը, զոր լաւ հասկնալու համար պէտք է ի նկատի ունենալ հետեւեալ իրողութիւնները:

1⁰. Եթէ Աստուծոյ մեր կախումը ըստուգութեան իրողութիւն մըն է ամէն կրօնական մարդուն համար, նոյնքան բացայայտօրէն է որ հոգեբանական զննութիւնը մեզի կը ցուցնէ պարտականութեան իրականութիւնը:

Երբ կ'անդրադառնանք մեր վրայ, գիտակցութիւնը կ'ունենանք սա բացարձակ կանոնին թէ ազատ ենք անշուշտ արդարութեան կամ օրէնքին հանդէպ զանցառու գտնուելու, բայց նաեւ թէ ամէն անգամ որ կը գործենք յանցանք՝ ներքնապէս դժգոհ կը մնանք մենք մեզի դէմ: Քանդի

գործածած գեղեցիկ բացատրութեան համեմատ բարոյական օրէնքը մեր վրայ պարտականութիւն մը կը դնէ հնազանդելու, ու մեր պարտականութիւններուն առաջինն է ընդունիլ թէ պարտականութիւն մը կայ։ Ասոր գէտ ստույգ է թէ կը բողոքեն եղաւորները, որոնք չա՛նք կը համարին մարդուն միակ զրդիլ զօրութիւնը։ Բարոյագիտութեան անկ է խօսիլ այս գաղափարին մասին և քննադատել զայն, թէ և բոլորովին անդէպ պիտի չըլլար նաև նկատել ալ հոս թէ ի Յիսուս Քրիստոս հաւատքը միանգամայն կը տարամերժէ զայն։ Եթէ չկայ պարտականութիւն, արդարեւ չկայ ոչ բարի և ոչ չար։ Եթէ չկայ ոչ բարի և ոչ չար, բնաւ իսկ չկայ ուրեմն մեղք։ Իսկ եթէ չկայ մեղք, փրկութիւնը անօգուտ կը լինի մեզի համար, այսինքն հակառակ Աւետարանական պատգամին, փրկագործութիւնը պատրանք մըն է միայն։

20. Քրիստոնէական բարոյականը չի բաւականանար պարտականութիւնը հաստատելով միայն, անիկա կը հաւանի նաև Քանգի տեսութեան, որուն համեմատ Աստուածային հրամաններն են մեր պարտականութիւնները, թէ և այս խօսքը չհասկնար այն իմաստով զոր նշանաւոր փիլիսոփան կուտայ անոր։ Ինչպէս տեսանք, Քանգ բարոյականի գաղտնէն է ապէս դուրս կը հանէ զԱստուած։ Մարդը կ'ըսէ պէտք է բարիք ընէ որովհետեւ այդ է Աստուծոյ կամքը, այլ բարիքը Աստուծոյ կամքն է, որովհետեւ բարին վեհագոյն կատարելութիւնն է։ Բարոյական ենթական ինքնօրէն է։ Աստուծոյ անգամ միջամտութիւնը «այլ օրինութիւն» (hétéronomie) մը պիտի կազմէր, օտար միջամտութիւնը, որուն դէմ մարդ պէտք է ինքզինքը պաշտպանէ անվարան։

Այս մասին բոլորովին տարբեր է անտարակոյս համոզումը Քրիստոնէին, որուն համար պարտականութիւնները պարտականութիւն են՝ Աստուծոյ աւանդուած օրէնքին արտայայտութիւնը ըլլալուն համար։ Միակ պարտականութիւնը զոր Աւետարանը կը պահանջէ՝ ընդունիլն է Յիսուս, որուն մէջ կը յայտնուի փրկագործական կամքը, և Յիսուս Քրիստոսով՝ մեռնիլ չար ցանկութեանց համար և նուիրուիլ Աստուծոյ։ Բարոյականի ուսման մէջ ընդլայնուած են այս սկզբունքին հետեւանքները։ Բայց

Քրիստոնէական ոգւով ըմբռնուած ստուգութենէն այն կը հասկնանք թէ հաւատացեալին բոլոր պարտականութիւնները կը սուզուին իր Տիրոջ հնազանդութեան մէջ, ու բարոյական գիտակցութիւնը կամ խիղճը, ճիշտ ինչպէս կրօնական գիտակցութիւնը Աստուծոյ է որ կ'առաջնորդէ մարդը։

30. Միւս կողմէ բարոյականութեան, Աստուծոյ և մարդուն միջև ենթադրուած յարաբերութիւնները անշուշտ կը տարբերին կրօնական գիտակցութեան ենթադրուածներէն, եթէ այս բառերէն իւրաքանչիւրը ըմբռնուին իրենց մեր տուած նշանակութեամբը միայն։ Կրօնական գիտակցութիւնը կամ երկիւղածութիւնը մարդը կը մղէ ինքզինքը ուրանալ Աստուծոյ առջև, մեր բացարձակ կախումի հաստատումն է ան։ Բարոյական գիտակցութիւնն ալ անշուշտ Աստուածային պարտականութեանց առջև կը դնէ զմեզ, զորս պէտք է կատարենք։ Բայց անոր յանձնարարած հնազանդելու իրողութիւնը այսինքն պարտականութեան օրէնք, ինքնին կ'ենթադրէ ընդվզումի հնարաւորութիւնը։ Աստուծոյ մենէ պահանջած ծանրութիւնը բռնագատեալ հնազանդութիւնը է։ Բարին կամ բարիքը զոր չես կրնար չընել, կը դադրի այդ անուան արժանի ըլլալէ։ Մեր կամքովը իրազործող սրբութիւնը՝ Աստուածային պատուէրը անձնիշխանութիւնը կ'ենթադրէ անոնց քով որոնց կ'ուզուի։ Եթէ ուրեմն կրօնական գիտակցութիւնը մեր կախումին յատկաւորումն է, կրօնական գիտակցութիւնը — ինչպէս Քանգ այնքան լաւ կը բացատրէ — մարդուն կ'երաշխաւորէ և կը յայտնէ իր ազատութիւնը։ Արդ՝ ազատութիւնը մեր կեանքին փառքն է։ Անձնաւոր և ազատ էակ, մարդ ինքզինքը ազատ կը գտայ աշխարհէն և ինքզինքէն նոյն իսկ։ Յաւատենականը կարող է անշուշտ ջախջախելու իրեն հակառակող մարդկանց, բայց Աստուած քանի որ ինքն իսկ ազատ ստեղծած է զմեզ, ատոր համար նոյն իսկ չընէր այդ բանը։ Եթէ կրնայ տիրաբար յաղթել, պէտք է կռիւով ձեռք բերէ յաղթութիւնը։ Տիեզերքի մէջ ոչինչ կրնայ ստիպել մարդը ըլլալ այլ ինչ քան ինչ որ կ'ուզէ ինքը։

Այսպէս է կամքին ազատութիւնը, զոր այնքան ճշդիւ կը պարզէ Քանգեան փիլի-

ստիպալութիւնը: Բարոյականութիւնը անոր մէջ է ուրեմն որ գուրտէն եկած ամէն ազգեցութիւն պէտք է անցնի մարդուն ներգործական աշխատանքէն: Մարդ տէրն է իր անձին և իր ճակատագրին: Կ'ըլլայ ինչ որ կ'ուզէ ըլլալ: Զինքը շրջապատող զօրութիւններուն ազդեցութիւնը կրաւորապէս չընդունիր. եթէ անոնց կը հնազանդի՝ զանոնք իւրացնելով, անոնց հաւանելով է որ կը հնազանդի: Իր էութեան ազատութեան զգացումովը հզօր՝ յաղթանակի հրճւածութիւնով կը կրկնէ սա կէս բառերը. «Մարդը եղէգ մըն է միայն, բնութեան ամենէն տկար էակը, բայց խորհող եղէգ մը: Պէտք չկայ որ տիեզերքը ամբողջ իրեն դէմ զինուի, զինքը ջախջախելու համար: Եոգի մը, չիթ մը ջուր բաւական են զինք սպանելու համար: Բայց եթէ տիեզերքն ալ ըլլար զինք ջախջախողը, մարդը իր սպանողէն աւելի բարձր պիտի ըլլար դարձեալ, վասնզի գիտէ թէ կը մեռնի, մինչ տիեզերքը չգիտեր առաւելութիւնը զոր ինքն ունի մարդուն վրայ: Այսպէս մտածումին մէջ կը կայանայ մեր բովանդակ արժանապատուութիւնը: Անո՛ր իշխանութեան տակ պէտք է միանք մենք և ոչ թէ միջոցին և տեւողութեան: Աշխատինք ուրեմն լաւ խորհիլ, ահաւասիկ բարոյականին սկզբունքը:

Այս մեր արժանապատուութիւնը մտածումին մէջ է, ու մտածումը որ կ'ազնւեցնէ զմեզ, և երկնային լուսապսակ մը կը դնէ մեր կեանքին վրայ, տեսական բանաձեւերու շարայարութիւն մը չէ, այլ օրէնքին ծանօթութիւնը որ մարդուն կը յայտնէ իր անձնիշխանութիւնը տիեզերքի որոշադրականութեան մէջ: «Ո՛վ պարտաւորութիւն կը գոչէ Քանդ, վսեմ մտածում, որ չես գործեր ո՛չ շողմով և ո՛չ սպառնալիքով, այլ ինքզինքդ կ'արդարացնես միտքին առջև, դուն որ յարգանք կը հրամայես եթէ ոչ միշտ հնազանդութիւն, դուն որ կ'իրքերուն լուծութիւն կը պարտադրես՝ երբ հոգիին դադարութեան մէջ կը խռովին անոնք, ի՞նչ է քու ծագումդ, և քեզի արժանի ի՞նչ սկիզբի կարելի է ընծայել զքեզ »:

Արդ, բարոյականութեան մէջ ազատութեան այս յայտնումը միայն անձնական փորձառութենէն չէ որ կուգայ մեզի, ժողովուրդներու փորձառութիւնն ալ նոյնը

զը հաստատէ. պատմութիւնը կը միանայ հոգեբանական ուսումնասիրութեան՝ հաստատելու համար անոր արժէքը, չոս կը յիշեմ նախ Ս. Գիրքը, որ յատկապէս կը մատնանշէ մարդուն արժանապատուութեան այդ զգացումը: Թէպէտև ամենակարող՝ Աստուած չուզեր բռնութիւն ի դործ դնել մեզի հանդէպ: Քրիստոս կոչում կ'ընէ կամքին անոնց՝ զորս կ'ուզէ համոզել (Յովհ. ե. 40, է. 17, Մատթ. Գ. 17): Պօղոս նոյնպէս իր պերճախօսութեան բոլոր հրնարքները կը գործածէ համոզելու համար մարդերը որ Աւետարանին զան (Բ. Կորնթ. ե. 14-20): Ու երբ այդ առաքեալը մէկ կողմէ կը յայտարարէ թէ Աստուած է որ մեր մէջ առաջ կը բերէ «կամիւ և առնիւ», միւս կողմէ ինքն է որ աշակերտները կը հրաւիրէ «ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործել» (Փիլ. Բ. 12, 13):

Բարոյական այս նկարագիրը հեթանոս կրօններուն մէջ ալ կը տեսնուի: Պասուլթօններուն մէջ, զոր օրինակ, թլփատութենէն ետքը եկող ժամանակաշրջանին մէջ երիտասարդներուն այսպիսի խիստ յորդորներ կը տրուին. «Ուղղեցէք ինքզինքնիդ, մարդ եղէք, վախցէք գողութիւնէն, վախցէք շնութենէն, պատուեցէք ձեր հայրն ու մայրը, հնազանդեցէք ձեր պետերուն»: Հինտուններն իսկ, այս հայեցողական ժողովուրդը, զօրաւոր և բարձր բարոյականի պատուէրներ ունի:

Եթեմովալքայի օրէնքներուն մէջ, ի միջի այլոց, կը կարդանք «Ճգնաւորութիւնը չէ որ առաքելութիւնը կը շինէ. առաքելութիւնը գործնական կեանքով կը ստացուի: Թող մարդ ուրիշին չընէ ինչ որ իրեն համար ցաւագին պիտի գտնէր»: Այլուր, Մանուի գիրքը հետեւեալ կերպով կ'արտայայտուի. «Ինչ դիրքի վրայ ալ ըլլայ, հոգին հաւասար բոլոր արարածներուն հանդէպ. թող մարդ լիովին կատարէ իր պարտականութիւնը, եթէ նոյնիսկ իր վրայ տեսանելի չըլլայ իր կարգը: Պարտականութեան կատարումը կապ չունի իր կարգին նշանին հետ»: Ու Մանուպարաթան կ'աւելցնէ. «Իմաստունը, թէ՛ իսկ իր տանը մէջ մնացած ըլլայ, եթէ իսկ կեանքին ամբողջ տեւողութեանը միջոցին, միշտ մաքուր և սիրալիլ է եղած, զերծ է բոլոր չարիքներէն»: Այլապէս այս բոլոր պատուէր-

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԸ



Աստուծոյ անուան յայտնութիւնը տարբեր աստիճաններով հետեւեալ կերպով կարելի է ցուցնել: Նախ՝ Բնութեան մէջ, որովհետեւ զԱյն իր գործերուն մէջ փնտռել ամենանախնական ու բնական քայլը պիտի ըլլար մարդկութեան համար: Ատեղծուած էն՝ Ստեղծողին, արդիւնքէն՝ Աղբյուրապատճառին վերանալ եղած է, նոյն իսկ նախնական դարերու մէջ, ամենապարզ տրամաբանութիւնը մարդկութեան, ու ատոր համար, Աստուածային Յայտնութիւնը Բնութեան մէջ, պէտք էր առաջինը ըլլար յայտնութեան կարգին մէջ: Երկրորդ Յայտնութիւնը ներշնչեալ Խօսքին մէջ եղաւ, երբ Աստուած իր ընտրեալ մարգարէներուն և ծառաներուն միջոցաւ իր անուան ու կամքին գրաւոր յայտնութիւնը ըրաւ: Երրորդ ու աւելի կատարեալ Յայտնութիւնը տրուեցաւ իր Որդւոյն վրայ ու Անոր միջոցաւ, և հիմա՝ Յայտնութեան լոյսին յաւելումով՝ որչա՞փ մեծ տարբերութիւն կայ Աստուծոյ անուան մասին մեր ունեցած հասկացողութեան և գիտութեան մէջ: Եւ այս երեք աստիճանները, այսօր, մեր մարդկային միտքերուն համար Անոր անուան նշանակութիւնը կատարեալպէս բացայայտեցին:

Կրնանք ըսել թէ Աստուծոյ անունը իր բնութիւնը կը ներկայացնէ: Երբ Մովսէս լեռնէն իջաւ ու այսպէս ժողովուրդը իրենց մեղքերուն համար և բանակէն դուրս հեռու տեղ մը կանգնեց խորանը, սկսաւ խօսիլ Աստուծոյ հետ, բարեխօսելով ժո-

ղովուրդին մեղքերուն համար. ան այսպէս կը պաղատէր, «Եթէ ոչ դու ինքնին երթայցես ընդ մեզ, մի հաներ զմեզ աստի» (Ելից ԼԳ. 15): Եւ Տէրը խոստացաւ չնորհք ընել. այն ատեն Մովսէս խնդրեց Տիրոջը փառքը տեսնել. «Եւ ասէ, Ես անցցից առաջի քո փառք խմովք, և ողորմեցայց որում ողորմեցայց, և զթացայց յոր զթացայց» (Ելից ԼԳ. 19): Նաև երբ Տէրը Մովսէսի պատուիրեց երկու քարէ տախտակներ կտփել և Սինա լեռը ելնել, և երբ Մովսէս երկու տախտակներով ելաւ լեռը, «Եւ էջ Տէր ամպով, և կայր յանդիման նորա անդ, և կոչեաց յանուն Տեառն: Եւ անց Տէր առաջի նորա, և կարդաց, Տէր Աստուած, զթած և ողորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճշմարիտ, որ պահէ զարդարութիւն և առնէ զողորմութիւն ի հազար ազգս, բառնայ զանօրէնութիւնս և զանիրաւութիւնս և զմեզս, և ոչ անպարտ առնէ զպարտաւորսն. ածէ զանօրէնութիւնս հարց յորդիս և յորդոց յորդիս մինչև յերիս և ի չորս ազգս» (Ելից ԼԳ. 6-7): Ահա ասիկա Աստուծոյ անունը և անոր Մովսէսի կողմէ կանչուիլը կը պատկերացնէ Աստուածային բնութիւնը, իր առատ ողորմութեան, և մեղքի գէժ տաժած անմարելի և բուռն պժգանքին մէջ:

Հին ու նոր Կտակարաններու մէջ Աստուծոյ տրուած անունները չատեն և բազմատեսակ, և անոնց հաւաքումը բաւական հետաքրքրական կրնայ ըլլալ. որովհետեւ, անոնց ամբողջութեան վրայ նետուած ակնարկ մը մեղի պիտի ցուցնէ Անոր բնութիւնը և ալլազան ստորոգելիքները: Ծնընդոցի «Եհովա-Աստուածէն» մինչև Յայտնութեան Գիրքին «Տէր Յիսուս Քրիստոսը», անուններու ինչ պէսպիսութիւն մը, որուն մէջէն կը ծիածանին Աստուծոյ անհունապէս հոգեգրաւ ստորոգելիքները:

Աստուծոյ անունը իր «Բանն» է: Քրիստոս յայտնողն է Տօր (Ելից ԻԳ. 20): Գիրքին մէջ յիշուած հրեշտակը, որ իսրայէլը պիտի առաջնորդէ, ու իր (Աստուծոյ) անունը անոր վրայ է, Քրիստոսն է: Եսայիայ (ԾԲ. 7) երգած լեռներուն վրայ գեղեցիկ ոտքով աւետիս բերողը, խաղաղութիւն քարոզողը, որով իր (Աստուծոյ) անունը պիտի գիտցուի իր ժողովուրդին մէջ, Քրիստոսն է:

(5)

Ե.

(վերջը յաջորդ թիւով)

«ԶԱստուած ոչ ոք ետես երբեք, քայլ Միածինն Որդի՝ որ է ի ծոց Հոր՝ նա պատմեաց» (Յովհ. Ա. 18)։ «Եթէ զիս գիտէիք, և զՀայրն իմ թերեւս գիտէիք» (Յովհ. Ը. 13)։ Պօսքերն ալ կը ցուցնեն թէ Յիսուս Հօրը յայտնողն է։ Այո՛, Աստուծոյ Պօսքը և անոր Քրիստոսի վրայ կատարեալ յայտնութիւնը, Աստուծոյ բնութիւնը կը պատկերացնեն։ «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն»։ Աստուծոյ անունը՝ անուններու գերաշնչն է։ Անոր անունով շնորհներու առատութիւնը վայելեցինք։ Անով ազգեր սպրնացան և երկիրներ կեանք առին։ Անոր յոյսով կը հրճուի մարդկութիւնը, Անոր անունը անջնջելի և ոսկեղէն տառերով գրուած է երկինքին կապոյտին, յաւիտեանական ժայռերուն, առաօտեան լոյսին, ու տիեզերքի ամէն մէկ հիւլէին վրայ։ Անոր անունն է մարդկութեան քայլերը առաջնորդող մեծահրաշ Յայտնութիւնը։ Ինչպէս որ մագնիսը հիւսիս կը դառնայ, այնպէս ալ մարդկութեան սիրտին հզօր մագնիսը Աստուծոյ անուան կը դառնայ։ Առանց այս անուան մարդկութիւնը, իբր անծայրածիր ովկիանի մը վրայ, պիտի կորսնցնէր ինքզինքին և համայն տիեզերքին գոյութիւնն ու գիտութիւնը, և չգիտականութեան և կամ կոյր գիպուածին ճակատագրականութեան յարատատան ալիքներուն վրայ մահաբեր կորստեան սարսափովը պիտի համակուէր։ Աստուծոյ անունը, մեծ, սուրբ յաւիտեանական ու տիեզերապարիպ անունը։

Բ. — Աստուծոյ անունը սրբաբանել, «Սուրբ եղիցի» զԱյն յարգել է, և այս կրաւորական միտքով պէտք է հասկնալ բնաւ. — այսինքն, մեր Աստուծոյ անուան սրբութեան համար աղօթելովը Անոր անունան սրբութիւնը չաւելնար։ Ան սկզբնապէս սուրբ էր, ու յաւիտեանապէս ալ սուրբ է իր անհուն սրբութիւնով։ Մանաւանդ երբ կը խորհինք մարդկային սիրտին անսրբութիւնները, և կամ մեր ունեցած շատ անշնչան սրբութեան վրայ՝ մեր Փարիսեցիական հպարտութիւնը, կարելի է՞ հարցնել թէ, մեզի պէս խեղճ ու անսուրբ արարածներու սրբաբանութիւնով պիտի սուրբ ըլլայ Անոր անունը։ Անոր, զոր Սերովբէներ և Քերովբէներ կ'օրհնաբանեն, երկնային հրեշտակներու անհամար խումբեր կը սըր-

բանեն երեքսրբեան սրբասացութեամբ. Անոր, որ ինքն է միակ անհուն սրբութիւնը տիեզերքին մէջ։

Բայց, «Սուրբ եղիցի» պէտք է սապէս հասկնալ, թէ այս աղօթքով կը հայցենք Աստուծոյ անուան սրբութեան տիեզերական գիտակցութեան ծաւալումը. — այսինքն, թէ ամէն մարդ ծայրագոյն յարգանքի առարկայ ընէ զայն, պաշտէ զայն, ու աշխարհածանօթ ըլլայ Անոր անունը որ աղբէն ամէն տեսակ անմաքրութենէ զերծ ու սրբութեան անպատմելի առաւելութիւններով օժտուած անուն մըն է։

Քանի որ «Սուրբ եղիցի անուն քո» աղօթել Աստուծոյ անունը թէ՛ յարգել թէ՛ ալ յարգելիլ հայցել կը նշանակէ ըսինք, ուրեմն, Անոր միւս բոլոր անուններէն աւելի «Հայր» անունը՝ ինչպէս սիրոյ նոյնպէս յարգանքի առարկայ ըլլալ պէտք է։ Մարգարէներու որդիները այսպէս հասկցան այս ճշմարտութիւնը, ինչպէս նաև Իսրայէլի թագաւորը Յովաւ։ «Հայր իմ, Հայր իմ» աղաղակեց եղիսէ, եղիսայի երկինք վերանալուն ատեն (Ի. Թագ. Բ. 12, 2. 21)։ Նոյնը աղաղակեց նաև Յովաւ երբ եղիսէ մահացու հիւանդութեամբ հիւանդացաւ։ Բայց ա՛լ աւելի Նոր Կտակարանի մէջ կը պատուիրուի զԱստուած իբրև Հայր պաշտել ու Անոր սուրբ անունը օրհնաբանել ինչ որ Յիսուս կը սորվեցնէ իր անձին օրինակովը։ Իր բոլոր կեանքին, բոլոր աղօթքներուն մէջ իր միակ ու սիրելի կերպն է զԱստուած «Հայր» անուանել, և նոյն իսկ խաչին ճգնաժամային տազնապններուն մէջ, տառապած հոգիին բոլոր թափովը աղաղակեց. «Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ»։ Այո՛, այս Հայր անունը ա՛լ աւելի սուրբ է ու կը սրբաբանուի երկնաւորներէն ու երկրաւորներէն, հրեշտակներու խումբերէն ու մարդերու ժողովներէն։ Եւ բնականաբար՝ պէտք է այսպէս ըլլայ, որովհետեւ «Հայր» անունը միակ մատչելի ու մեր սիրտերուն մօտիկ անունն է Աստուծոյ, և անոր համար աւելի կը սիրենք փառաբանել այս անունը։ Կը հիանանք Անոր «Տէր Սարաօթ» անուան, երկիւղախառն զգացումով կը համակուինք Անոր «Եհովա Հզօր Աստուած», «Տէր Զօրութեանց» անուններէն, կը սարսափինք Անոր «Արդար և Վրէժխնդիր Աստուած» ա-

նուններէն. բայց կը պաշտենք Անոր անունը իբրեւ «Հայր», «Սուրբ Հայր». կը սրբաբանենք Անոր անունը իբրեւ Սէր-Աստուած — «Սէր է Աստուած». իբրեւ լոյս-Աստուած — «Աստուած լոյս է»։ Ահա Աստուծոյ միւս բոլոր անուններէն աւելի մեզի համար սիրելի անունը։ Եւ, ո՛հ, մարդկութիւնը որչա՛փ պէտք ունի Անոր այս անունը սրբաբանելու, որովհետեւ, իբրեւ գթած ու բազումողորմ Հայր, Անոր անունը սրբաբանել, ահա այս եղած է միակ ու անձկագին տենչը տառապած մարդկութեան։ Այո՛, սուրբ թող ըլլայ Անոր «Հայր Երկնաւոր» անունը։

Եթէ Աստուծոյ անունն, մանաւանդ Հայր անունն, սուրբ ճանչցուելուն համար կ'աղօթենք, և մենք ալ զայն կը սրբաբանենք, ուրեմն, մեր թէ՛ այս աղօթքը, թէ՛ ալ ուրիշներու մասին ըրած հայցուածք պէտք է զուարթութեամբ ու յօժարութեամբ ըլլան. թէ՛ մենք և թէ՛ ալ ուրիշներ ինքնանուէր կամքով պէտք է հնազանդինք մեր այս նուիրական պարտականութեան կատարումին. որովհետեւ, այսպիսի հնազանդութիւն մը սիրոյ ճշմարիտ յարգանքն է։ «Սուրբ եղիցի անուն քո» աղօթել, խորհելով թէ բոլոր մարդիկ նոյնը կ'ընեն, թէ բոլոր քրիստոնեաներ այս անունն առջև պաշտումի երկրպագութիւն կը մատուցանեն, թէ այս սովորական դարձած կերպ մըն է, թէ Աստուծոյ սպառնալիքները կը սարսափեցնեն ու կը վախցնեն մեզ, թէ հակառակը ընել ամօթ, նախատինք ու մեղս պիտի բերէր մեզի, ասոնց բոլորն ալ ստորին ու անպատշաճ շարժառիթներ պիտի ըլլային, և ընդունելի պիտի չըլլային Աստուծոյ անունն սրբութեան համար մատուցուած աղօթքի մը սրբութեան սահմաններուն մէջ։ Ինչպէս որ Մովսէս սրբուիլ կը պատուիրէր ժողովուրդին՝ երբ ինք բարեխօսելու կամ աղօթելու կը պատրաստուէր անոնց համար, նոյնպէս մենք ալ մեր բոլոր զգացումներն ու խորհրդածութիւնները, մեր ամբողջութիւնը պէտք է սրբենք յօժարակամ նուիրումով՝ երբ կը պատրաստուինք աղօթել «Սուրբ եղիցի անուն քո»։ Ինչպէս որ մարդ մը իր ձեռնարկելիք գործին մեծութեան և կարեւորութեան համեմատ կը պատրաստուի և կը կեդրոնացնէ իր կարողութիւնները,

նոյնը ընել պէտք ենք նաեւ մենք, երբ այսչափ կարեւոր ու էական հայցուածի մը համար Աստուծոյ առջև կը մօտենանք. ուրովհետեւ, այս երեւութապէս բոլորովին Աստուծոյ յատուկ մաղթանքն ու հայցուածքն ալ աւելի մեզի համար կարեւոր է ու էական։ Ուրեմն, պէտք չէ՞ մեր ամբողջ հոգին դնել այսպիսի աղօթքի մը մէջ, ու այն ալ բոլորովին յօժար կամքով. պէտք է աւելի՛ պաշտումի, ստիպումէ աւելի՛ սիրոյ, սովորութենէ աւելի՛ սրբութեան, բընական անտարբերութենէ աւելի՛ ինքնանուէր յօժարութեան ոգին պէտք է տիրէ մեր մէջ, երբ կը մատուցանենք այս վսեմ աղօթքը, սուրբ բաղձանքը «Սուրբ եղիցի անուն քո»։

Նաեւ Աստուծոյ անունը սրբաբանել, Հայրը Որդիին միջոցաւ յարգել կը նշանակէ։ «Եւ ոչ եթէ Հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ. զի ամենեքեան պատուեսցին զՈրդի՝ որպէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայրն՝ զառաքիչն նորա» (Յովհ. Ե. 22-23)։ «Ամենայն որ ուրանայ զՈրդի, և ոչ զՀայր ընդունի. որ խոստովանի զՈրդի, նա և զՀայր ընդունի» (Ա. Յովհ. Բ. 23)։ Որդւոյն միջոցաւ Աստուծոյ անունն մատուցուած բոլոր յարգանքներն ու պաշտամունքները ոչ միայն Որդին, հապա նոյն իսկ Հայրը կ'ընդունի։ Որդին որ Հայրը փառաւորեց, փառաւորութեցաւ նաեւ Հօրմէն, անոր համար Որդւոյն անունն սրբութիւնը համազօր է Հօր անունն սրբութեան։ Երբ Որդին կ'աղօթէր իր «Սուրբ Հօր» այս էր իր միակ խնդիրքը իրեններուն համար, «Սուրբ ըրէ ասոնք, ով Հայր»։ Եւ քանի որ Յիսուս առաքեալներուն միջոցաւ բոլոր մարդկութեան սրբազործուելուն համար աղօթեց Հօրը, և նոյն իսկ սրբեց մեզ իր սուրբ արիւնով ո՞րչափ աւելի պարտականութիւն մը պէտք է զգանք մենք ալ աղօթելու համար «Սուրբ եղիցի անուն քո»։ Ահա այս կերպով մեր այս աղօթքով Որդւոյ միջոցաւ փառաւորած ու յարգած կ'ըլլանք Հայրը, և Անոր արգէն սուրբ անունը։

ԳՐ. ՍՐԿ. Հ. ԴԱԼՈՒՍՏԵԱՆ

(Ճարուցակելի՛ 7)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ա. Հ. Ա. Ի. Ա. Ս. Ի. Կ

Անաւասիկ կեանքիս աւունը արդէն
 եւ կը կարծեմ թէ ամառ է տակաւին .
 Մերք կ'ունենամ պատրանքն անգամ գարունին՝
 Դէմքս ծաղկող ուրիշներու գարունէն...

Ո՛րչափ, ո՛վ Տէր, ծառի փափուկ ծաղիկներ
 ինկան արեւն խորակահար, ցրահար .
 Որչափ պրտուղ ալ երբեք չեն հասուննար՝
 Զի որդ մը միշտ զանոնք ներսէն է կերեր...

Բայց գարունէն եւ ամառէն իմ կեանքին
 եւ կը պահեմ յուր կապոյտ ծովերու
 եւ նաւերու՝ զացած աշխարհ մը հեռու...

Նոր յոյսերով երբեմն դեռ կ'օրրեմ զիս,
 Սակայն վրասս, ինչպէս թեւ մը խաւարի,
 Կ'իյնայ ներկան եւ ամէն լոյս կը մարի...

Վ. Ա. Հ. Ա. Ն. Թ. Է. Ք. Է. Ե. Ա. Ն.



Հ Ա Ի Ա Տ Ա Յ Ե Ա Լ...

Հաւատացեալ իմ հայրս ու մայրս էին,
 Ու մեծ հայրերս ու մեծ մայրերս ալ բոլոր,
 Հաւատացեալ կրօնքին մէջ Յիսուսին,
 Անով խոնարհ, անով հրպարս ու հրգօր:

Այդ սանդուխին ես վերջին ոտք, ա՛հ, ի՞նչպէս,
 Անկէ եկող անհուն շրմուհին ուրացայ,
 Ճանաչալոյս դարերն ի վար, յամբապէս
 Ինծի եկող աստուածային նախընծայ...

Առանց անոր տեղերի մէջ մինակ
 Ու կտրուած իմ անցեալէս կ'ապրէի,
 Սառած հոգւով, սառած լոյսին տակ երկնի...

Մինչդեռ հիմա, ես այն համբէն համարձակ
 Եւ մեղմաբայլ կը մօտենամ առ Աստուած,
 Ամէն քայլի նախնեացս հոգւովն ուժովցած...

1925

Վ.Ա.ՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՆԱԳՐԱԿԱՆ ՔԱՆԻ ՄԸ ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԵՒ

ԶՄՇԿԻԿԻ ԿՈՂՄԷ ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾԻ ՈՒՂՂՈՒԱԾ

ՆԱՄԱԿԻՆ ՎԵՐՋԱԲԱՆԸ

Թէ Ուռհայեցիի գործը նոյնութեամբ է հասած մեզի՝ կը հաստատուի Վաղարշապատի հրատարակութեամբ, որուն երկու մեծ հատուածները կը պակսին Երուսաղէմի հրատարակութեան մէջ (տես Վաղարշապատի հրատարակութեան Յառաջաբանը, էջ 1): Այս պարագան յիշած էի, ուրիշ բառի մը առթիւ, Աղոնցի վերոյիշեալ ուսումնասիրութեան հրատարակութենէն քանի մը ամիս առաջ, նոյն հանգէսին մէջ⁽⁹⁾: Իսկ ձեռագրական խաթարութեանը մասին խօսիլ աւելորդ է, որովհետեւ հաւանականաբար ո՛չ մէկ հին հեղինակի գործ անայլալ վիճակի մէջ հասած է մեզի:

Տարիներ առաջ, Պ. Ժողէֆ Լոռան ալ անդրադարձած էր Ուռհայեցիի բնագրին խաթարման: Ուռհայեցիի գործը, կը գրէր Փրանսացի պատմաբանը, «մեզի է հասած իր սկզբնական ամբողջութեամբ, ո՛չ առանց սրբագրութեանց և յապաւումներու, և այն տպաւորութիւնը կը թողու թէ, իր ներկայ վիճակին մէջ, ամփոփոյք մըն է, քաղուածքներու շարք մը աւելի ամբողջական գործէ մը, կատարուած անկանոն կերպով և առանց մեթոտի: Անոր մէջ կան ցաւալի ընդհատներ և յանդուգն հաւաստումներ»⁽¹⁰⁾:

Աճառեան (Գ. 679) ունի խոսափուլ բառը, իբրեւ նորագիւտ, մէկ անգամ գործածուած Սմբատի մէջ, և զայն կը ստուգաբանէ յն. chrysophilaxe «գանձապահ»: Տրուած բացատրութեանց համաձայն, պէտք

է ուղղել յն. chrysoboullou «ոսկեվուլ» կամ «ոսկեբուլ», ֆր. chrysobolle:

Պէտք է նաև, իբրեւ անգոյ բառեր, հայերէն բառարաններէն (Աճառեան և Մալխասեան) վտարել ովուլանը և սովոլոնը: Աճառեան չունի առաջինը, իսկ վերջինը (Զ. 337 և Հայերէն Նոր Բառք, Ա. 196) կ'առաջարկէ ուղղել ովոլոն, զոր սակայն ուրիշ տեղ յիշած ըլլալ է թուիր:

Ծ. ԶՄՇԿԻԿԻ ՆԱՄԱԿԻՆ ՎԵՐՋԱԲԱՆԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Չմշկիկի կողմէ Աշոտ Ողորմածի ուղուած նամակին վերջաբանին մէջ բնագրական այս ուղղութեանը ընելէ ետք, Ն. Աղոնց փորձած է վերականգնել զայն, բայց ֆրանսերէն լեզուով և, իր ուսումնասիրութեան ընթացքին՝ հատուածաբար: Հետեւելով իրեն, այդ փորձը կ'ուղեմ կատարել հայերէն, աւելցնելով քանի մը տեղեկութիւններ:

Անհրաժեշտ է սակայն, նախ այս վերջաբանը առաջ բերել այնպէս ինչպէս որ կը գտնուի Ուռհայեցիի մէջ, ըստ Երուսաղէմի հրատարակութեան: Փակագիծի մէջ կը գնեմ Վաղարշապատի հրատարակութեան տարբերակները, որոնց կը հետեւին նաև Էջմիածնի ձեռագիրներուն տարբերակները⁽¹¹⁾:

(11) Վաղարշապատի հրատարակութեան հիմ ծառայած են Էջմիածնի Մատենադարանին հինգ ձեռագիրները, որոնք ներկայացուած են Ա. Բ, Գ, Դ և Ե տառերով (մանրամասնութեանց համար տես Յառաջաբանը, և վերը § 2):

(9) Byzantion, 1933, p. 553-554:

(10) Byzantion, 1924, p. 372-373:

Եւ յանափոռալէն պոռոտապաթարին Դերջանայ, Լեւոնի եւ Տարօնոյ զօրավարին ողջոյն եւ ի Տէր խնդալ:

Արդ զիտացաք (զրեցաք) որ զԱյծեաց բերդն որպէս յանձին կալար՝ չեա տուեալ, եւ այժմ զրեցաք առ զօրավարդ մեր, որ ոչ զբերդն (բերդն) առնու եւ ոչ զջորեանն (զջորեանն), Ա, Բ, Դ, Ե՛ զջորեանն) զոր պայմանեցեր (պայմանեցեր, Ա, Դ՛ պայմանեցեր), զի այժմ չեղեա առ մեզ պէտք: Բայց զքառասուն հազար սովուլան (սովուլան, Ա՛ սովուլան, Դ՛ սովուլան) զոր յուղարկեցաք, տուր տանել առ զօրավարն մեր, որ առաքէ առ Թագաւորութիւնս մեր. եւ զվաստաւ կոցդ քոց եւ զարմտեացդ ազանեսա (13) (զտանեսա) զփոխարէնն ըստ սերմանեացն զամենայն բարի մի ըստ միողէ:

Ն. Աղոնց, նամակին այս վերջարանին աւելի հարազատ թէ եւ համառօտուած պատճէնը գտած է, ինչպէս վերը ըսուեցաւ, Սմբատ Գունդստապի Տարեգիրքին մէջ (տես վերը): Վերականգնումի փորձէն առաջ, անհրաժեշտ է յառաջ բերել այդ տողերն ալ, ըստ Շահնազարեանի հրատարակութեան որ այստեղ կարեւոր ուէ տարբերութիւն չունի Յովհաննիսեանցի հրատարակութենէն:

Դրեաց եւ ի պոթօսպաթարն եւ ի Տարօնոյ զօրավարն զի տարցին առ Թագաւորն Հայոց Աշոտ զխոսափունն եւ զեկան ասկի երեսուն հազար եւ ծառայս երկու հազար, ձի տան հազար եւ ջորի հազար վասն սիրոյն եւ միաբանութեանն զոր արար ընդ նմա:

Ն. Աղոնցի ուղարկութենէն վերպած է որ Չմչկիկի նամակին պարունակութեան մէկ շատ հակիրճ ամփոփոյթը կը գտնուի նաեւ Սամուէլ Անեցիի (19) մէջ, էջ 102: Ահաւասիկ այս ամփոփոյթին այն մասը, որ կը վերաբերի այստեղ քննուած խնդրին.

Եւ յդեաց [Չմչկիկ] ԲՈՒ (2000) ծառայ եւ ժՈՒ (10000) ձի Հայոց արքային Աշոտոյ. զի Աշոտ տուեալ էր յոգնականութիւնն (տպուած՝ յոգնականութիւն) նմա 2ՈՒ (8000) ձիաւորս եւ այլ բազում նետեակաւ:

Ինչպէս կը տեսնուի, Սամուէլ Անեցիի մէջ կը պակսին Սմբատի 30000 դեկանը եւ 1000 ջորին. բայց գերիներուն եւ

ձիերուն թիւերը կը համապատասխանեն Սմբատի թիւերուն:

Հիմնուելով այս երեք բնագրերներուն վրայ, հետեւեալ կերպով կը վերականգնեմ Չմչկիկի նամակին վերջաբանը: Ստորադժուած բառերը աւելցուած են ըստ Սմբատի (եւ Անեցիի): Բնագրական սրբագրութիւնները արդէն բացատրուած են մասամբ, իսկ նորերը կը բացատրուին ծանօթագրութեանց մէջ:

Եւ յանափոռալէն պոռոտապաթարին (14) Դերջանայ (15) Լեւոնի եւ Տարօնոյ զօրավարին արդ զիտացաք (16) որ զԱյծեաց բերդն որպէս յանձին կալար՝ չեա տուեալ. եւ այժմ զրեցաք առ զօրավարն (17) մեր որ ոչ զբերդն առնու եւ ոչ զջորեանն (18) զոր պայմանեցեր, զի այժմ չեղեա առ մեզ պէտք. Բայց զխոսափունն եւ զեկան ասկի երեսուն հազար եւ ծառայս երկու հազար, ձի տան հազար եւ ջորի հազար, տուաք (19) տանել առ զօրավարն մեր, որ առաքէ առ Թագաւորութիւնդ ձեր (20), եւ զվաստակոցդ քոց եւ զարմտեացդ զտանեսա (21) զփոխարէնն ըստ սերմանեացն զամենայն բարի մի ըստ միողէ:

6. ՉՄԵՆԻԿԻ ՆԱՄԱԿԻՆ ՎԵՐՋԱՐԱՆԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Բնագրական ուղղումներէն եւ վերջաբանին վերականգնումէն ետք, աւելորդ չէ

(14) Ուհայեցի ունի պոսաւսպար (եւմ., էջ 32, Վաղ., էջ 27), Սմբատ՝ պոսոսպարար (հր. Շահ., էջ 36) եւ Պոսոսպարար (հր. Յովհան., էջ 17): Հետեւելով Ահաւասիկի (Ե, 1147, ուր տես միւս ուղղագրութիւնները), կը նախընտրեմ յունարէնին ամենէն մօտ հայերէն ձեւը:

(15) Կը շնջեմ «Դերջանայ»-ին յաջորդող ստորակէտը:

(16) Վաղարշապատի հրատարակութեան մէջ «արդ զրեցաք»-ը յայտնօրէն զրչագրական սխալ մըն է:

(17) Փոխանակ «զօրավարդ»-ի, ինչպէս կայ քիչ մը վաղը:

(18) Բոլոր ձեռագրները, բացի Էջմիածնի մէկ ձեռագրէն, ունին «զջորեանն»: Աշոտ Չմչկիկի արմարիք հայթայթած էր արդէն, ինչպէս քանի մը տող վաղը կ'ըսէ Չմչկիկ, եւ, հետեւաբար, պատեբազմին վերջաւորութենէն ետք, ցորեն չուղեւ տեղի չէր մնար:

(19) Փոխանակ «տուաք»-ի (սրբագրութիւն Աղոնցի):

(20) Փոխանակ «բազաւորսքիւն» մեր»-ի (սրբագրութիւն Աղոնցի):

(21) Ըստ Վաղարշապատի հրատարակութեան եւ իմաստին պահանջման:

(13) Երուսաղէմի հրատարակութեան մէջ «ազանեսա»-ն ետք փակագծի մէջ աւելցուած է «ստանա» իբրեւ բացատրութիւն:

(19) Սամուէլի Բաղնայի Անեցւոյ Հաւաքումնք ի Դրաց Պատմագրաց, հրատ. Արշակ Տէր Միքելեանի, Վաղարշապատ, 1898:

անշուշտ այս վերջաբանին⁽²²⁾ մասին պատմական բացատրություններ տալ, ըստ ն. Ագոնցի:

Ուռնայեցի (եէմ., էջ 19-23 և Վաղ., 17-19) կը պատմէ թէ երբ Լիկանտոսի թեմին հայազգի զօրավարը Մլեհ, սկզբնական յաջողութիւններէ ետք, Ամիդի առջև պարտուեցաւ և մահմետականներուն ձեռքը դերի ինկաւ, Չմշկիկ Արաքներուն դէմ պատերազմի ձեռնարկեց իր զինուորական պատիւին վրէժը լուծելու համար (974-975). բայց փոխանակ Արաքներուն վրայ յառաջանալու, նախ ուղղուեցաւ դէպի Հայաստան: Չմշկիկի այս յառաջխաղացումը վրդովեց հայ արքայազուները, ազատները, իշխաններն ու մեծամեծները, որոնք փութացին Աշոտի շուրջը հաւաքուիլ, ամէն պատահականութեան առջև պատրաստ գտնուելու համար: Հայկական զօրքը, իբրեւ 80000, բանակեցաւ Հարք գաւառին մէջ: Սակայն առանց երկու բանակներուն միջև ունէ ընդհարումի, բանակցութեանց ձեռնարկեցին երկու կողմերը: Չմշկիկ Աշոտէն զինուորական օգնութիւն և արմտիք ուղեց: Աշոտ 10000 ի չափ ընտիր զինուորներ տուաւ, ինչպէս նաև պահանջուած պարէնը: Չմշկիկ և Աշոտ զինակցեցան:

Չմշկիկ յաղթական յառաջացաւ մինչև Երուսաղէմի շրջակայքը, և պատերազմին վերջաւորութեանը Աշոտին ուղղեց նամակ մը, որուն մէջ իր պատերազմական գործողութիւնները պատմեց իր զինակիցին⁽²³⁾:

Նամակին վերջաբանին մէջ Չմշկիկ կ'անդրադառնայ Այծեաց բերդին խնդրին: Իր տողերէն կը հետեւի որ այս բերդին մասին բանակցած էր Աշոտի հետ, երբ Տարօն կը գտնուէր: Աշոտ խոստացած էր բերդը յանձնել Դերջանի պոռոտսպաթարին (protospathaire) և Տարօնի զօրավար Լեւոնի, բայց իր խոստումը չէր յարգած:

Կը տեսնուի որ Տարօնի խնդիրը տակաւին վերջնականապէս լուծուած չէր: Կցումը հռչակուած էր. բայց ռազմագիտական կարեւոր կէտ մը՝ Այծեաց բերդը տեղւոյն զօրավարին իշխանութեան ենթակայ չէր: Վերջաբանէն կը հասկցուի որ կայսրը այլեւս այս բերդը չէր պահանջեր, և անոր վրայ Աշոտի իշխանութիւնը կը ճանչնար անոր զրկելով ոսկեբուլ (chrysoballe) մը, ինչպէս նաև զանազան նուէրներ, իր պատերազմական աւարէն բաժին հանելով նաև իր զինակիցին, անկէ ստացած զինուորական օգնութեան և պարէնին փոխարէն:

Թէ Տարօն բոլորովին ենթակայ չէր բիւզանդական իշխանութեան՝ ճշմարտութեան համապատասխան կը թուի, որովհետև 976ին երբ Սկլերոս ապստամբեցաւ, Տարօնի Գրիգոր և Բագարատ իշխանները, որոնց կալուածները գրաւուած էին, տակաւին իրենց երկրին մէջ կը գտնուէին և ապստամբին միացան ուրիշներէն առաջ:

Ոսկեբուլին առաքման առթիւ Ագոնց կը յիշէ Վասակ, Գրիգորիկէս, Բագունի, Իսմայէլ և Մլեհ հայ իշխաններուն պարագան: Ասոնք Բիւզանդիոնի Լեւոն Զ. կայսրէն ոսկեբուլներ ուղեցին և ստացան այն հողերուն համար զոր պիտի գրաւէին Լիկանտոսի սահմաններուն մէջ: Ոսկեբուլը սեպհականութեան գիրի մը արժէքը ունէր: Երբ Իբերիոյ կուրապաղատը Բասենի և Արնիկի բերդին վրայ իր սեպհականութեան իրաւունքը հաստատել ուղեց, ոսկեբուլներ իրակայացուց, որոնք սակայն կեղծ էին: Լեւոն Զ. Տարօնի իշխանին «առանց ոսկեբուլի» նուիրած էր «Բարբարոսին տունը» Կ. Պոլսոյ մէջ: Ռոմէն Լեկապինոս կայսրը զայն ետ առաւ իշխանին ժառանգորդներէն:

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

(22) Նամակը Փրանսերէնի Թարգմանած են. — 1. — F. Martin, Détails historiques de la première expédition des Chrétiens dans la Palestine sous l'empereur Zimiseès, tirés d'un manuscrit arménien inédit de la Bibliothèque impériale composé dans le XIIe siècle par Matthieu d'Edesse, etc. Paris, 1811 (Extrait du Magasin encyclopédique, t. V). 2. — E. Dulaurier, Մ. Ուռնայեցիի Պատմութեան Փրանսերէն Թարգմանութեան մէջ, որ մասամբ արտադրուած է խաչակրութեանց պատմագիրներու (Հայկական Աղբիւրներ, Ա. հատոր) հաւաքածոյին մէջ, Ռուսերէնի Թարգմանած է Chr. Kutschuk Jouanesof Վիզանդիայի Վեմենցի հանդէսին մէջ (X, 1903, էջ 93 յըդ.). առանց վերջաբանին. — G. Schlumberger, l'Epopée byzantine, I, p. 283-291, Dulaurierի Թարգմանութենէն օգտուած է, ինչ ինչ ժանօթագրութիւններ աւելցնելով:

(23) Հայկական աղբիւրներուն մէջ պահուած այս տեղեկագիրը Չմշկիկի զինուորական գործողութեանց վերաբերեալ միակ վաւերագիրն է:

ՆՈՐԱՅՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

7.

Ստոկհոլմ, 13 Ապրիլ 1898.

Մեծ. Տեղ. Միքայել Թամամչեանց,

Անցեալ տարի երբ ծանուցիք ինձ ի Ստոքհոլմ որ Լամբրոնացւոյ համար ընդօրինակեալ խորհրդացւոյ Պատմութիւն Ձեր քով կը գտնուի, մեծապէս ուրախացայ, քանզի ես անյայտացեալ կը համարէի զայդ պատուական Ձեռագիրը: Կ'ուզէ՞ք անչափ ուրախութիւն պատճառել ինձ, երեք ամսոյ համար փոխ տալով զխորհրդացիդ, որպէսզի ընդօրինակեմ զայն և առ Ձեզ վերադարձնեմ: Եթէ հաճիք զայս մեծ շնորհս ընել ինձ, կարէք յղել զՁեռագիրդ առ Ռուսի Տէրութեան Պաշտօնեայն ի Ստոքհոլմ (à Son Exc. M. le Ministre de Russie, à Stockholm), զրելով նմա որ Ձեռագիրն իմ քովս (Néandre de Byzance Norayr, 15 Fredsgatan, Stockholm) պիտի մնայ երեք ամիս, և յետ երեք ամսոյ պիտի յանձնեմ զայն վսեմ. Պաշտօնեայն, որպէսզի նա ինքն հասցնէ զայն առ Ձեզ իմ ծախում, (յայտնի է թէ ապահովագրեալ, assuré): Ինչպէս ըսի Ձեզ՝ զոր չեմ կարենեանցի բաղդատութեամբն. և որովհետեւ դիտաւորութիւնս է խորհրդացւոյ նոր բնագիր մի պատրաստել և ջրել զկարիքի անտեղի կարծիս, մեծապէս օգտակար պիտի ըլլայ ինձ Ձեռագիրդ, և ես յանձնեմ երախտապարտ պիտի մնամ Ձեզ և պիտի յիշեմ անբաւ շնորհակալօք զՁեր անուն:

Կը յուսամ որ որդի առողջ էք հանդերձ Ձեր սիրասուն զաւակօք:

Հաճեցէք ընդունիլ, Մեծ. Տէր, զիմ խորին մեծարանաց հաւատարմութիւնս:

Խ. Ծ. Նորայր.

M. Michel Tamamchoff,

Directeur-Gérant de la Banque de Commerce
de Tiflis, Conseiller municipal de la ville de Tiflis.
Tiflis (Russie)

8.

Ստոկհոլմ, 13 Յունիս 1898.

Մեծապատիւ Տեղ. Սմբատ Շահաղիզեան,

Ընկալայ զՁեր պատուական Ամառնալին նամակներն՝ զոր բարեհաճած էիք յղել առ իս, և ընթերցայ ակնորոշելով: Զուարթ և միանգամայն հրահանգիչ են գրութիւնքդ, և լի ողջամտութեամբ: Ինչ որ կ'ըսէք Տ. Խալաթեանի քննադատութեան նկատմամբ, զոր օրինակ յերեսս 40 և 67, համամիտ եմ և ես Ձեր ըսածներուն: Գեղեցիկ է նաև խորհրդածութիւնդ, 106-107, որ եթէ Խորենացի է - Թ դարերու մատենագիր է, ի՞նչպէս կ'ըլլայ որ յայդ դարերէդ էական կամ շօշափելի նշան մի թողած չըլլայ իւր Պատմութեան մէջ:

Մատուցանելով Մեծապատիւ Տեառնդ զիմ ջերմ շնորհակալիս, մնամ ամենայն յարգանքօք

Խ. Ծ. Նորայր.

M. Sembat Chahazizian
Moscou (Russie)

9.

Ստոկհոլմ, 5 Սեպտեմբեր 1898.

Մեծ. Տեղ. Լեւոն Մսերեանց,

Ընկալայ զՁեր քարտէսն Օգոստ. 1-ի, և զերկուս տետրակսն (Միսիթարեանք, և Հայ գաւառաբարբառք): Յոյժ շնորհակալ եմ: Գրաբարի մասին իմ կարծիքս միշտ այն եղած է թէ ե գարու Հայք ոչ միայն կը հասկանային, այլ և կը խօսէին պարզ գրաբար, զորոյ օրինակն տուած է մեզ Փարպեցին իւր Պատմութեամբ և Թղթով, որ գրուած են ո՛չ վարդապետի կամ վարժապետի համար՝ այլ աշխարհական իշխանի:

խորին յարգանքօք
Նորայր.

M. Lévon Msérianz
Menchikowa Bachnia
Maison Milowanoff
Moscou (Russie)

10.

Ստեփանով, 12 Յունուար 1899.

Առ Դերապատիւ Տէր

Տէր Սահակ Եպիսկոպոս Խապայեան,

Դերապատիւ Տէր Եպիսկոպոս,

Շատ կարեւոր հրատարակութիւն մի է «Բաղդատութիւն Տպագիր Սովրատի և Երուսաղէմի Զեռագրին», յորմէ օրինակ մի բարեհաճած էիք յղել ինձ. կը մատուցանեմ Ձեզ զիմ ջերմ շնորհակալութիւնս:

Երբ աւարտի իմ գործս Կորիւն վարդապետ եւ Նորին Թարգմանութիւնք, պիտի յղեմ Ձեզ օրինակ մի: Խնդրեմ ըսէք ինձ թէ ինչ հասցէին պարտիմ առաքել, և յերուսաղէմ թէ յերուսաղէմատունն Կ. Պօլսի: Կանխիւ ծանուցանեմ որ երկրիդ գրաքննութեան համար վնասակար պիտի նկատուի երկասիրութիւնս, և եթէ գրաքննութենէն անցնի՝ հաւանական է որ չհասնի ի ձեռքդ: Եթէ կայ ապահով ճանապարհ կամ միջոց՝ հաճեցէք ծանուցանել ինձ:

Գիտեմ յԱմսօրեայ Հանդիսէ (1894, 363 ա) որ ի մատենադարանի վանացդ կայ Տաղարան տպագրեալ ի վենետիկ յամին 1513: Մեծապէս կը փափագիմ ունել զամբողջական ընդօրինակութիւն Տաղարանիդ, յստակ գրով, երես առ երես՝ նշանակելով զիւրաքանչիւր երեսի թիւն, ճիշտ այնպէս՝ ինչպէս է ի տպագրին: Ո՛րչափ երախտապարտ պիտի մնամ Դերապատիւ Տեառնդ եթէ բարեհաճիք կատարել զիմ փափագն: Եթէ իմ սակաւ գիտութեամբս Հայերէն գրականութեան կարենամ ունէ ծառայութիւն մատուցանել Ձեզ՝ սիրով պատրաստ եմ:

Մաղթելով Դերապատիւ Տեառնդ քաջողջութիւն, մնամ խորին մեծարանքօք

Խոնարհ ծառայ

Նորայր Ն. Բիւզանդացի

Հաճեցէք նշանակել գաղղիերէն զՁեր հասցէն: Իսկ իմս է Norayr de Byzance, Fredsgaton 15, Stockholm.

à Sa Grandeur Monseigneur Sahak Khabaian
au Couvent Armenien de St Jacques Jérusalem

11.

Ստեփանով, 16 Մարտ 1899.

Յոյժ Ազնիւ եւ Սիրելի Բարեկամ
Վսեմապատիւ Տէր Կ. Եղեանց,

Ընկալայ զՁեր պատուական թուղթն
Յունուար 15/28-ի:

Զունիմ զգաղղիական թարգմանութիւն Լատիվերտացոյ ի Prud'homme-է, և շնորհակալութեամբ կ'ընդունիմ զխոստացեալդ: Ընդ նմին կը խնդրեմ որ բարեհաճիք յղել ինձ (փոխ) զտպագրեալ Տաղարանն Պետրոսի Ղափանցոյ, Կ. Պօլսի, ՌՄԻԱ, զոր ունիք ի գրադարանիդ:

Նահապետի Սիրոյ Տաղերն չեմ կարծեր որ կարենան հրատարակել ի Լուսալի: Գայթաղել սիրող մարդիկն հաւանական է որ դատասիւստեն զպատուականն Տէր Գիւտ եթէ նորա Հանդիսին մէջ երեւնան տուփական բանաստեղծութիւններ շատ աւելի կրակոտ քան զթուղթուրանցոյն, քան զԱղթամարցոյն և զՍայաթ Նովայի:

Մաղթելով Վսեմական Տեառնդ քաջողջութիւն և մատուցանելով զյարգանաց ողջոյնս ամուսնիս, մնամ խորին մեծարանքօք

Անձնանուէր Ձեր

Նորայր.

12.

Ստեփանով, 11 Մայիս 1899.

Մեծապատիւ Տէր Սս. Մալխասեանց,

Ընկալայ ի 11 Ապրիլ զպատուական գործդ Սեբեոսի Պատմութիւնը եւ Մ. Խորեանցի, և կը մատուցանեմ զիմ շնորհակալիս հանդերձ ամենայն մեծարանքօք:

Նորայր.

13.

Ստեփանով, 11 Մայիս 1899.

Մեծ. Տեղ. Կ. Կոստանեանց,

Մարտի 3-ի նամակաւ շնորհակալութեամբ ծանուցի Ձեզ որ ընդունած եմ զպատուական նուէրսդ Տաղից Գր. Աղբաւարցուն և Մկ. Նաղաւի: Խնդրեցի նաև որ բարեհաճիք յղել ինձ օրինակ մի ի նորատիպ Մասքեռուկ Ուռնայեցուն, զի վսեմ. Տէր Կ. Եղեանց գրած է ինձ որ երբ պէտս ունենամ նախնեաց տպագրեալ մատենագրութեանց յեջմիածնէ՝ առ Ձեզ դիմեմ: Նոյն նամակի մէջ ընդարձակօրէն գրեցի և զՏաղից Նախապետի Խառակոյնիսեցուն և հաղորդեցի Ձեզ զօրինակ Տաղի նորին՝ որ կը սկսի «Ժամիկ մ'աշերուդ ի զատ երբ կացի՝ նա զիս մոռացար»: Մինչև այսօր չընկալայ ի Ձեզ պատասխան, և կը կասկածիմ որ նամակս հասած չէ ձեռքդ: Հաճեցէք տեղեկութիւն տալ ինձ, որպէս զի եթէ նամակս կորսուած է՝ պահանջեմ ի Ստեփանովի թղթաւնէն:

Խորին մեծարանօք
Նորայր.

14.

Ստեփանով, 6 Փետրուար 1900.

Մեծ. Տ. Կ. Յ. Բասմաճեան,

Ընկալայ զՓետր. 1-ի քարտեղ: Ձու նիմ զգործն Tikkonen-ի. նոյն իսկ եթէ ունենայի, անհնար պիտի ըլլար ինձ կատարել զփափագդ:

Շնորհակալ եմ Բանասիրիդ Գ. գրոց: Ի Լուսայ հանգիսի (Տփղիս, 1896, Յունիս, երեսք 309-328) հրատարակած եմ զԹառաջաւան Փարպեցուն Պատմութեան, բաւական տարբեր ի Մեծ. Հ. Պարոնեանի հրատարակածէն (Բանասէր Գ. Գիրք, երեսք 267-279): Խնդրեմ ծանուցանէք զայս Հ. Պարոնեանի սիրոյ ողջունիւս կը փափագեմ որ կարգայ զայն և յայտնէ զիւր կարծիս յառաջիկայ Բանասիրի:

Պատմութիւնն Ֆրա Աւգոստինոսի (Բանասէր, Գ. երեսք 222-237) վաղ իսկ հրատարակեալ է ի Բ. Պատկանեանէ ի տետրակին Նոխարք Մասնագրութեան Հայոց,

Պետերբուրգ 1884, երեսք 5-26, վերնագրեալ. — «Աւգոստինոսի Բաղեցւոյ Ճանապարհորդութիւն յԵւրոպայ»:

Ամենայն մեծարանօք
Խ. Ժ. սգազգած Նորայր.

M. Basmadjian
112, Boulr. Rochechouart, Paris.

15.

Ստեփանով, 2 Ապրիլ 1900.

Մեծապատիւ Հայր Գաբեգին Վարդ.
Յովսէփեան,

Ընկալայ զՁեր պատուական նամակն Յունուար 30-ի (հ. տ.): Թառաջ քան զամենայն կը մատուցանեմ Ձեզ զիմ սրտագին շնորհակալութիւնս ազնիւ ցաւակցութեանդ համար: Կորուստս չատ մեծ է. ամեն օր ոչ այլ ինչ կը խնդրեմ յԱստուծոյ բայց եթէ զօրութիւն կրելոյ սիրով և համբերութեամբ զայն թշուառութիւն յոր ընկղմեցայ իւր ամենասուրբ կամօք:

Խնդակից եմ Մեծապատիւ Վարդապետիդ, որ Հոգեւոր Տեառն կարգադրութեամբ ստանձնեմ էք զպաշտօն խմբագրութեան Արարախ: Վստահ եմ որ ամենուս սիրելի Արարախն մեծապէս պիտի շահի՝ ունելով ի գլուխ Ձեզ նման եռանդուն և ուսումնասէր անձնաւորութիւն մի: Ի սրտէ կը մաղթեմ կարողութիւն և լիութի յաջողութիւն:

Ահա տարին բոլորեցաւ յորմէ հետէ կորուսի զսիրելիս, և ես կ'անցընեմ օրերս կիսակենդան: Երբ շնորհիւ Տեառն սթափիմ ի խոր սգոյս և կազդուրիմ, յօժարութեամբ կը կատարեմ զՁեր փափագն աշխատակցելոյ Արարախիդ: Շնորհակալ եմ մեծապէս Արարախիդ առաքման առ իմ նուաստութիւն:

Խնդրեմ ողջունէք յինէն զՄեծ. Բարդուղիմէոս Վրդ. Գեորգեան, զորոյ ընկալայ զնամակն, կը պատասխանեմ յետ աւուրց:

Հաճեցէք ընդունիլ, Մեծապատիւ Վարդապետ, զիմ խորին մեծարանոց հաւաստիս:

Խ. Ծ. սգազգած Նորայր.

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Գ Լ Ա Ձ Ո Ր

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Գլաձորի վանքը կը գտնուէր Սիւնեաց նահանգի Վայոց Ձոր գաւառին մէջ: Վանքին անունը կը գրուի այլևայլ ձեւերով. ինչպէս, Գայլուձոր, Գայլիձոր, Գայլեձոր, և այլն: Գրիչ Գրիգոր քահանայի համաձայն ճիշդ կոչումն է Գլաձոր «որ յանհմուտ և գնչու արանց Գայլաձոր ասի»: Նախկին անունն էր Աղբեց վանք, զոր կը պարտէր մօտերէն բխող աղբիւրներու բազմութեան: Եկեղեցին նուիրուած էր Ս. Ստեփանոս նախավկայի անունին:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Գլաձորի վանքը իբրեւ մեծահամբաւ կեդրոն կը փայլի մեր պատմութեան մէջ կարճ պահիկ մը միայն: Այդ միջոցին հոն կը դասախօսեն գիտութեամբ հռչակուած երկու մեծ վարդապետներ,

1. — Ներսէս Վրդ. Մեցի, (1280-մ. 1284 փետր. 6), որ աշակերտած էր Վարդան վարդապետի, և լաւ հմուտ էր յուսարէն լեզուին, և հասցուց քանի մը անուանի վարդապետներ, ինչպէս, Մխիթար վրդ. Կերմանեցի կամ Սասնեցի (✠ 1337), Յովհաննէս վրդ. Արճիշեցի՝ Ոսպնակեր, Ստեփանոս արք. Օրբէլեան, և այն որ յաջորդեց իրեն,

2. — Եսայի Վրդ. Նչեցի (1284-մ. 1338), որուն բազմաթիւ աշակերտներուն մէջ նշանաւորագոյն հանդիսացան Սալատուր վրդ. Կեչառեցի, Յովհաննէս վրդ. Որոտնեցի և Տիրատուր վարդապետ:

Եսայի վրդ. Նչեցիի երկերէն յայտնի են.

ա. — Մեկնութիւն եղեկիւնի, Ստեփ. Օրբէլեանի խնդրանքով գրուած 1303ին. — Զեռ. էջմ. թ. 1265/1275, թ. 1266/1276.

բ. — Մեկնութիւն Քերականի. — Զեռ. էջմ. թ. 1523/1548.

գ. — Համառօտ Լուծմունք Յաղագս երկնային Քահանայութեանց Գրոց Դ. Արիսպագացոյ. — Զեռ. էջմ. թ. 161/167.

դ. — Ճառք Մեկնողականք. — Սաղմ. Բ. էջ 275, 277.

ե. — Թուղթ վասն Կարգաց եկեղեցւոյ և ժամուց. — Զեռ. էջմ. թ. 1523/1548.

զ. — Յաղագս Զեռնադրութեան, 1333-7 թուականներուն գրուած. — Զեռ. էջմ. թ. 2193/2178.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Գլաձորի վանքը առաւելապէս զպրեմանք մը եղած է, ուր յաճախած են ամէն կողմերէ ուսումնասէր երիտասարդներ և կրօնաւորներ ստանալու համար կրօնական և եկեղեցական բարձրագոյն ուսում և վարդապետական գաւազան: Կարճատե եղած է Գլաձորի կեանքը, հազիւ վաթսուց տարի (1280-1338): Դպրանոցին ուսուցչապետները եղած են նախ Ներսէս վրդ. Մեցի, իբր օգնական ունենալով Եսայի Նչեցին, և ապա Եսայի վարդապետ, իբրեւ օգնական ունենալով Դաւիթ վարդապետը: Նչեցիի մահով և ժամանակին քաղաքական վերիվայրուածներուն հետեւանքով Գլաձորի Համալսարանը պատմութեան բեմէն կ'անհետանայ յանկարծակի, ինչպէս եղած էր իր երեւումն ալ:

Հակառակ ժամանակին կարճ տեւողութեան Գլաձորը կատարած է մեծ դեր, թէ հասցնելով զարգացած վարդապետներու շարքեր, և թէ արձագրութեամբ բազմացնելով այնպիսի թանկագին երկեր, որոնք իր միջոցաւ փրկուած են և հասած մեզի: Բազմաթիւ են ընտիր Գրիշներ և ոչ սակաւ նշանաւոր մանրանկարիչներ, որոնց մէկ ամփոփ ցանկը ահաւասիկ, ժամանակագրական կարգով.

Ա. — Լուսեր Գրիչ, 1280ին օրինակած է Հաւաքածոյ մը, հոետոր Ներսէս վրդ. Մեցիին համար, որ կը պարունակէ եզնիկի հնագոյն ընդօրինակութիւնը. — Սաղմ. Գ. 154.

Բ. — Ստեփանոս Կրօնաւոր, Գրիչ, 1282ին օրինակած է մէկ Յաղագս երկնային Քահանայապետութեան, Դ. Արիսպագացոյ, հրամանաւ հոետոր Ներսէս վարդապետի. — Կար. թ. 67: Սաղմ. Բ. 203-6.

Գ. — Եսայի Վրդ. Նչեցի, Գրիչ, Սրբազրիչ եւ Հեղինակ (1280-մ. 1338). օրինակած է 1280 աւան թուականներուն,

1. — Մեկն. Յայնութեան Յովնանու, Անգրէաս եպիսկոպոսի. — Կար. թ. 1396.

2. — Գիրք էակաց, և այլն. — Կար. թ. 1778:

Դ. — Յովհաննէս Կրօնաւոր, Գրիչ, 1291-8, օրինակած է,

1. — Մեկն. Կարողիկեայց, 1291 ին. — Հայպ. 525: Սիսկ. 131: Երնջակ, 157:

2. — Գիրք Պիտոյից, 1298 ին. — Սիսկ. 133: Խաղբ. Բ. 210:

3. — Աստուածաւունջ, Տոսպեցի Կարապետ վարդապետի համար. — Ֆր. Մուրատ, Յայանութիւն, ՅԺԹ:

Ե. — Տիրացու Գրիչ, 1291-1317: Գլաձորի մէջ Յովսափ գրչի օրինակած Մեկնութեան բովանդակ քարտէսը կոկած է 1291 ին. նաև մասնակցած է Աստուածաւունջի մը ընդօրինակութեան, 1317 ին. — Կար. թ. 175: Խաղբ. Գ. 166:

2. — Յովսափ Գրիչ, 1292 ին օրինակած է մէկ Մեկն. Գործոց, Գէորգ Լամբրոնացիի, Եսայի վրդ. Նչեցիի համար. — Կար. թ. 1333: Խաղբ. Բ. 210:

Է. — Մկրտիչ Քահանայ, Գրիչ, 1298-1302, աշակերտ Գրիգոր վրդ. Բջնեցիի (Յ 1298) և Եսայի վրդ. Նչեցիի: Գլաձորի մէջ օրինակած է 1298 ին մէկ Հաւաքումն Մեկնութեանց. — Խաղբ. Գ. 158-160:

Ը. — Վարդան Վրդ. Կիլիկեցի, Գրիչ, 1299-1305, աշակերտ Եսայի վրդ. Նչեցիի. օրինակած է,

1. — Մեկն. Եսայեայ, Գէորգ վրդ. ըՍկեւոացիի, 1299 ին, որ Կեսարիոյ Կոստանդին արքեպիսկոպոսին կողմէ նուէր կը ղրկուի Եսայի արքիւնարան վարդապետին, ձեռամբ Մրենու Վարդան եպիսկոպոսին. — Ս. Յ. թ. 365: Պատմ. Կեսարիոյ էջ 1845:

2. — Մեկն. Սաղմոսաց, Ն. Լամբրոնացւոյ, (մասամբ), 1300 թուին. — Խաղբ. Գ. 161:

3. — Ընդհանրական և այլն, Ն. Շնորհալիի, 1305 ին, որ Անաւարդեցի Գր. Կաթողիկոսին կողմէ նուէր կը ղրկուի Եսայի Նչեցիին, 1305 ին, ձեռամբ կաթողիկոսի «հաւատարիմ լիկատին տէր Կոստանդեայ արքեպիսկոպոսին Կեսարու» — Շողակաթ էջ 209:

4. — Մեկն. Իճն Երանուքեանց եւ Հայր Մերի, Գր. Նիւսացւոյ. — Զեռ. էջմ. թ. 652/749: Խաղբ. Գ. 163:

Թ. — Յովհաննէս Վրդ. Երզնկացի, Ծործորեցի, Պուլզ, նշ. Գրիչ եւ Մատենա-

գիր, 1300-1326, աշակերտ Վարդան վարդապետի. օրինակած է Գլաձորի մէջ,

1. — Մեկն. Սաղմոսաց, Ն. Լամբրոնացւոյ, (մասամբ), 1300 ին. — Խաղբ. Գ. 161:

2. — Ժողովածու Մեկնութեանց Յովն. Աւետարանչի, 1306 ին. — Կար. թ. 1311: Շողակաթ էջ 210: Խաղբ. Գ. 165:

3. — Աստուածաւունջ, 1318 ին, Կիրակոս Երզնկացիի հետ, նկարազարդող Թորոս Տարօնեցիի, ստացող Եսայի վրդ. Նչեցիի. — Կար. թ. 176: Շողակաթ էջ 211: Խաղբ. Գ. էջ 169-70:

Ժ. — Մխիթար Վրդ. Սասնեցի կամ Կերմանեցի, Գրիչ, Ծաղկող եւ Հեղինակ, 1260-Չ.մ. 1337, աշակերտ Ներսէս վրդ. Մշեցիի և Եսայի վրդ. Նչեցիի: Գլաձորի մէջ օրինակած է 1303 ին, մէկ Վերլուծութիւն Դանիէի Մարգարէի. — Խաղբ. Գ. 165:

ԺԱ. — Ոսկան Վրդ. Գրիչ, 1304 ին օրինակած է Աւետարան մը. — Թ. Աղբար Բ. 375: Սիսկ. էջ 134:

ԺԲ. — Տիրատուր Կիլիկեցի, Գրիչ, 1309 ին օրինակած է Աւետարան մը. — Խաղբ. Բ. 218:

ԺԳ. — Կիւրիոն Կրօնաւոր, Գրիչ, 1311-33, որդի Վարդան քահանայի, աշակերտ Եսայի վրդ. Նչեցիի. Գլաձորի մէջ օրինակած է,

1. — Ժողովածու Մեկնութեանց, 1311 ին. — Կար. թ. 1429: Խաղբ. Գ. 176:

2. — Աւետարան, 1321 ին. — Յովս., Մի էջ 19:

ԺԴ. — Թորոս Տարօնեցի, Գլաձորեցի, նշ. Մանրանկարիչ, 1307-1346, որդի Մշեցի Սարգիս քահանայի և Մարիամի. Գլաձորի մէջ արտագրած իր երկերէն ծանօթ են,

1. — Աւետարան, գրիչ Պօղոս վարդապետ, ծաղկող Թորոս, 1307 ին, ստացող Եսայի վրդ. Նչեցիի. — Sir. Der Ners., Manus. Arm. III., Paris, 1937, p. 179: Թ. Քիւրտեան, Բաղմ. 1947 էջ 217:

2. — Գիրք Լուծմանց, 1314 ին նկարազարդած է. գրիչ Մխիթար Երզնկացի. — Զեռ. ի Վենետիկ, Հանգ. Ամս. 1915, էջ 64-5:

3. — Աստուածաւունջ, 1317 ին նկարազարդած է. օրինակուած է չորս գրիչներէ, որոնցմէ Կիրակոս վրդ. Երզնկացիին է ըստացողը. — Կար. թ. 175:

4. — Ոսկեփորիկ, 1317-8 ին, Սարգ. թ. 265:

5.- Ասուածաւունջ, նկարազարդած է 1318ին: Գրիչներն են Կիրակոս և Յովհաննէս Երզնկացիներ. ստացող՝ Եսայի վրդ. Նչեցի. — Կար. թ. 176: Շող. էջ 211:

6.- Աւեսարան, 1321ին նկարազարդած է. գրիչ Կիրեղ քահանայ. — Կոն., Բրիտ. Թանգ. թ. 14: Ros. III. 270:

7.- Գիրք Եօթն Խորհրդոց, Թ. Ագուռնացւոյ, թրգմ. Յովհաննէս Մործարեցի (1321ին). Թորոս գրած է մէկ մասը 1325ին. ստացող Սարգիս վարդապետ. — Կար. թ. 493: Խաղբ. Գ. էջ 174-5:

8.- Ասուածաւունջ, 1328ին նկարազարդած է. գրիչ Դաւիթ վրդ. Գեոկեցի, ստացող Առաքել վրդ. Հաղթատեցի. — Խաղբ. Գ. 103-5:

9.- Ասուածաւունջ, 1330-32ին, օրինակուած Դաւիթ և Եփրեմ գրիչներէ, Սասնեցի Ներսէս վարդապետին համար. — Սարգ. թ. 12:

ԺԵ. — Պողոս վրդ. Ակներցի, Քաջ Գրչապետ եւ Մանրանկարիչ, 1313-34. աշակերտ Եսայի վրդ. Նչեցի: Գլխաւորի մէջ օրինակած է,

1.- Աւեսարան, 1313ին և նկարազարդած Կիրիկեան ոճով. — Խաղբ. Գ. 166:

2.- Աւեսարան, 1314ին, և նկարազարդած նոյնպէս Կիրիկեան ոճով. ստացողն է Ստեփ. Օրբէլեան. — Խաղբ. Բ. էջ 41, 221:

3.- Աւեսարան, 1334ին. ստացողն է Գրիգոր քահանայ. — Լոյս, 1905, էջ 367:

ԺԶ. — Մխիթար Երզնկացի, Գրիչ, 1314-28, որդի Պօղոսի և Տիրանցի, աշակերտ Գրիգորիս Երզնկացիի կամ Յաղմաացիի. Գլխաւորի մէջ օրինակած է մէկ Գիրք Լուծմանց, 1314ին, զոր ծաղկած է գեղեցկապէս՝ Թորոս Տարօնեցի. — Հանգ. Ամս. 1915, էջ 64: Ros. II. 29: Խաղբ. Բ. 220: Հայպ. էջ 525-6:

ԺԷ. — Կիրակոս վրդ. Երզնկացի, նշ. Գրիչ եւ Հեղինակ, 1317-54, հօրեղբայր Յովհաննէս Երզնկացի գրչի, աշակերտ Եսայի վրդ. Նչեցի: Գլխաւորի մէջ ընկերակցաբար օրինակած է,

1.- Ասուածաւունջ (մասամբ), 1317ին. — Կար. թ. 175:

2.- Ասուածաւունջ (մասամբ), 1318ին. — Կար. թ. 176:

ԺԸ. — Յովհաննէս Սարկ. Երզնկացի, Գրիչ, հղբօրորդի Կիրակոս վրդ. Երզնկա-

ցիի, որուն հետ միասին օրինակած է Ասուածաւունջ մը, 1317ին, իր հօրեղբոր համար. — Կար. թ. 175: Խաղբ. Գ. 166:

ԺԹ. — Կարապետ Երէց, Գրիչ, որդի Գրիգորի և Հաղթեղբոր, 1317ին մասնակցած է ընդօրինակութեան Ասուածաւունջի մը, Երզնկացի Կիրակոս վարդապետի և այլ գրիչներու հետ. — Կար. թ. 175: Խաղբ. Գ. 166:

Ի. — Սարգիս Աբեղայ, Գրիչ, 1317-8ին օրինակած է Ոսկեփորիկ մը, որուն ստացողներն են Գրիգորէս և իր աշակերտը Մամախաթուն: Ծաղկած է Թ. Տարօնեցի. — Սարգ. թ. 265: Խաղբ. Բ. 222: Սիսկ. 133:

ԻԱ. — Յակոբ վրդ. Թագորցի, Գրիչ, Գլխաւորի մէջ 1318ին օրինակած է

1.- Կանոնագիրք, Տիրացու քահանայի համար. — Խաղբ. Գ. 102:

2.- Գիրք Մարգարեալուքեան, Գր. Նիւսացւոյ. — Սիսկ. էջ 133: Խաղբ. Բ. էջ 232:

ԻԲ. — Եփրեմ Աբեղայ, Գրիչ, 1318-30. — Աշակերտ Մարտիրոս վարդապետի: Գլխաւորի մէջ օրինակած է,

1.- Հաւաքածոյ Մեկնութեանց, 1318ին. — Խաղբ. Գ. 170-1:

2.- Ասուածաւունջ, 1330ին, Դաւիթ Գեոկեցիի հետ, Սասնեցի Ներսէս վարդապետի համար. — Սարգ. թ. 12:

ԻԳ. — Կիրեղ Կրօնաւոր, Գրիչ, 1321ին օրինակած է Աւեսարան մը, Կուսակրօն Մարտիրոս քահանայի համար. — Կոն. թ. 14: Ros. III. 270 (9):

ԻԴ. — Դաւիթ վրդ. Գեոկեցի, Գրիչ, 1327-30. Գլխաւորի մէջ օրինակած է,

1.- Ասուածաւունջ, 1327-8ին, Հաղթատեցի Առաքել վարդապետին համար. — Խաղբ. Գ. էջ 103-5:

2.- Ասուածաւունջ, 1330ին, Եփրեմ գրչի հետ, Սասնեցի Ներսէս վարդապետի համար. նկարազարդած է Թ. Տարօնեցի. — Սարգ. թ. 12: Խաղբ. Բ. 238:

ԻԵ. — Յունան Գրիչ, 1334ին իրմէ օրինակուած պատառիկ մը, ընտիր բոլորգրով. — Շողակաթ էջ 213: Խաղբ. Բ. 240:

ԻԶ. — Գրիգոր Քահանայ, Գրիչ, 1335ին օրինակած է մէկ Մեկն. Առակաց, Ն. Համբրոնացւոյ. — Խաղբ. Գ. 178:

Ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈՐՄԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՍԵՌԵՐՈՒ

APPLIED FORMS

(Կիրառական Ֆորմեր)

Նախորդ յօդուածաշարքերու մէջ պարզեցի թէ ինչպէս երգահան մը կը սկսի աշխատանքի նախքան թուղթին յանձնելը իր երաժշտական ներշնչումները: Տեսանք նաև այն երկու form-երը որոնք գոյութիւն ունէին երաժշտութեան մէջ: Սակայն ցարդ մեր խօսածները form-ը կը ներկայացնէին մեզի վերացականօրէն (abstract): Որպէսզի կարելի ըլլայ երաժշտական զանազան գործիքներով և կամ ձայնական (vocal) միջոցներով արտայայտել երաժշտութիւնը, արուեստագէտը պէտք է նկատի ունենայ այն կարելիութիւնները, որոնք իր տրամադրութեան տակ եղող, վերարտադրումի գործիքները, կը ներկայացնեն: Այսպէս շատ մը երաժշտական կտորներ որոնք շատ դիւրաւ կարելի է նուագել գաշնակի վրայ, չափազանց կամ գրեթէ անկարելի է նոյն կտորներուն նուագումը (execution) ջութակի վրայ և փոխադարձաբար: Նոյնպէս երբ ձայնական (vocal) երաժշտութիւն կը մշակենք պէտք է նկատի ունենանք այն ձայնամիջոցները (interval) որոնց սահմանին մէջ է միայն որ կրնանք արտայայտել ինքզինքնիս: այլապէս, մեր բոլոր ստեղծագործութիւնները որքան ալ արժէքաւոր գործեր ըլլան պիտի նկատուին դժուար երգիչի կտորներ թէ անհաճոյ և թէ ալ անարժէք: Տարբերելու համար այս form-ը՝ որ միշտ նկատի ունի իր և գործիական միջոցին (medium) յարաբերութիւնները, մեր նախապէս յիշած վերացական (abstract) Form-էն, զայն կ'անուանենք Applied (կիրարկուած) forms:

Երաժշտութիւնը, ընդհանուր առմամբ կարելի է ըսել թէ երկու սեռերու բաժնուած է. — ա) Գործիական (Instrumental) և բ) Զայնական (Vocal):

Գործիական երաժշտութիւնը իր կարգին կարելի է նաև երկու խումբերու բաժնել. — ա) անոնք որոնք միաժամանակ և տեւականօրէն կրնան առանձինն harmonie (ներդաշնակութիւն) արտադրել ինչպէս օրինակ դաշնակը, քնարը, organ-ը և harmonium-ը: Բ) Անոնք որոնք չեն կրնար առանձինն միաժամանակ և տեւականօրէն (կան կարգ մը գործիքներ, ինչպէս ջութակը, որոնք կրնան մի քանի յաջորդական, ոչ տեւական, chord-եր յաջորդաբար արտադրել) harmonie արտադրել ինչպիսին են բոլոր լարաւոր և փչաւոր գործիքները: Առաջին խումբիները կը կոչուին Բազմաձայն (Polyphonus) գործիքներ, իսկ երկրորդ խումբիները՝ Միաձայն (Monophonus) գործիքներ: Զայնական երաժշտութիւնն ալ կարելի է երկու խումբերու բաժնել ա) Միաձայն (Solo), Բ) Բազմաձայն կամ Երգչախմբային (Choral):

Applied Form-երու (կիրարկուած) առաջին սեռը որ պիտի ուսումնասիրենք Dance Form-երն են՝ որոնք ամենէն պարզ ձևերն են գործածուած զանազան form-երուն:

Երբ Dance form-ի մասին կը խօսինք պէտք է զայն շփոթենք հասարակ առումով գործածուած Dance-ի երաժշտութեան հետ, այլ պէտք է նկատի ունենանք զայն իբրև form որովհետեւ մինչ Dance Music-ին մէջ հեղինակին մտահոգութիւնը եղանակը չորս և ութը mesure-ի ռիթմով գրեթէ միօրինակօրէն հեղինակին է որպէսզի յարմարի պարի քայլերուն, Dance form-ին մէջ երաժիշտը չենթարկուիր այդ սեղմումներուն թէև շատ մը Dance form-ով գրուած եղանակներով կարելի է պարել: Այնքան մեծ է թիւը Dance form-ով գրուած պարերու որ դժուար պիտի ըլլար նոյն իսկ հակիրճ կերպով ներկայացնել այդ բոլորը և իրապէս ալ աւելի երաժշտութեան պատմութեան կը պատկանի անոնց ուսումնասիրութիւնը քան գործնական composition-ին: Պիտի գոհանամ խօսելով անոնց մասին որոնք կամ հին Suite-ներու սեռին մէջ կը գործածուէին, որոնցմէ ծնունդ առած և զարգացած են ներկայ գործիական զանազան սեռերը, և կամ անոնց որոնք մինչև այսօր իսկ կը գործածուին: Պէտք է մոռնալ որ բոլոր այս անջատ եղանակները Binary form-ով գրուած են:

Հին Suite-ը կը բաղկանար շարք մը (ընդհանրապէս չորս) շարժումներէ՝ dance-form-ով գրուած որոնց բոլորն ալ նոյն բանալիով գրուած կ'ըլլային։ Մեծ Suite-ներու մէջ (ինչպէս Bach-ի «English Suite»-ները) առաջին dance-էն առաջ կը նուագուէր Prelude-ի մաս մը սակայն պզտիկ Suite-ներու մէջ այս շարժումը կամայական էր։ Որեւէ կատարեալ Suite մը կը բաղկանայ նուազագոյն չորս շարժումներէ որոնք յաջորդաբար կը կոչուին Allemande, Courante, Sarabande և Gigue։ Ասոնց կարգին երգահանը ազատ էր աւելցնելու Sarabande-ին և Gigue-ին միջև dance մը որ գրուած ըլլար Dance form-ով։ Bach-ի գրած dance-երու մէջ, որոնք անցեալէն ֆիացած ամենէն լաւ նմոյշներն են այս սեռին, յաւելուածական այս մասը կամ dance-ը կ'ըլլար Gavotte մը, Bourree մը, Passpied մը և կամ Minuet մը։

Allemande-ը որ առաջին և անհրաժեշտ շարժումն էր ունէր ընդհանրապէս նուազ կանոնաւոր rhythmic կառուցուածք քան հին միւս dance-երը։ Ընդհանրապէս $\frac{3}{4}$ չափով կը գրուէր։

Courante-ը $\frac{3}{2}$ չափով իսկ երբեմն ալ $\frac{3}{4}$ չափով գրուած արագ շարժում մըն էր։

Sarabande-ը դարձեալ $\frac{3}{4}$ կամ $\frac{3}{2}$ չափով սակայն դանդաղ շարժում մըն էր։

Իսկ չորրորդ շարժումը հին Dance form-ին Gigue-ն էր որ ընդհանրապէս $\frac{3}{8}$ և կամ $\frac{6}{8}$ իսկ երբեմն ալ $\frac{12}{8}$ և կամ $\frac{12}{16}$ չափով կը գրուէր։ Bach-ի Suite-ներուն մէջ Gigue-ը երբեմն կը ստանար մեծ ծաւալ և երբեմն Fugue-ի ոճով կը գրուէր և կը մշակուէր։

Sarabande-ին և Gigue-ին միջև գործածուած Dance form-երէն զլխաւորներն են. — ա) Gavotte-ը $\frac{2}{4}$ չափով արագ շարժում մը որ դարձեալ Bach-ի գործերուն մէջ ստացած է մեծ ծաւալ։ Բ) Passepied-ն $\frac{3}{8}$ չափով եռանդուն շարժում մը։ Գ) Bourree-ն $\frac{2}{2}$ չափով եռանդուն նկարագիր ունեցող շարժում մը։ Դ) Rigaudon-ը որ գրեթէ Bourree-ին կը նմանէր։ Ե) Minuet-ը որ մեր թուածներէն ամենէն կարեւորն է, որովհետեւ ան միակն է որ ապրած է և կը կազմէ մինչև այսօր Instrumental երաժշտութեան անբաժան մասը, ընդհանրապէս $\frac{3}{4}$ կամ $\frac{3}{8}$ չափով գրուած կ'ըլլար։ Երբ

բեմն այս Minuet-ին կը յաջորդէր Trio-ի մաս մը երեք ձայն ներդաշնակութեամբ, որմէ յետոյ դարձեալ առաջին Minuet-ը կը կրկնուէր կամ հին բանալիի վրայ և կամ յարաբերական նոր բանալիով մը։

Երբ Minuet-ին յաջորդէ Trio մը եղանակին form-ը կը դադրի Binary ըլլալէ և կ'ըլլայ Ternary։ Երբեմն սակայն կը հանդիպինք մէկէ աւելի (երկու, երեք, չորս) Trio-ներու յաջորդական։ Այս պարագային ալ եղանակը գրուած կ'ըլլար Rondo form-ով որուն մասին պիտի անդրադառնանք։

Minuet-ը ներկայ երգահաններու մօտ (սկսելով Haydn-էն) նկարագրով կը տարբերի հին Minuet-ներէն։ Նոր Minuet-ները աւելի արագ և ուրախ տրամադրութիւն ունին։ Այս փոփոխութիւնը զլխաւորաբար կը պարտինք Haydn-ի։ Աւելի մէկ նոր developement-ը Minuet-ին, որ կը պարտինք Beethoven-ի հանճարին, Scherzo-ն է։ Beethoven-ի Scherzo-ները ընդհանրապէս fantastic նկարագիր ունին։

Ներկայ Dance form-երու ամենէն կարեւորներէն է նաեւ Walze-ի (Valse) սեռը։ Այս պարը որ գերմանական ծագում ունի $\frac{3}{4}$ կամ $\frac{6}{8}$ չափով կը գրուէր։ Ուրիշ նկատառման արժանի dance-եր են Mazurka-ն, որուն մեծ կարեւորութիւն ընծայած է Chopin։ Բոլորնական ծագում ունեցող պար մըն է այս արագ և $\frac{3}{4}$ չափով։ Polonaise-ը կամ Polacca-ն դարձեալ բոլորնական ծագումով, որ դանդաղ նկարագիր մը ունի և կը գրուի $\frac{3}{4}$ չափով։ Polonaise-ն ալ կարելի է ընդլայնել և ընել Ternary, աւելցնելով Trio-ի մաս մը։ Polonaise-ին ուրիշ մէկ փոփոխակն է Marche aux Flambeaux-ն (գերմաներէն Fackeltanz) որ կը նուագուէր արքայական ամուսնութիւններու առնէ։ Յատկանշական dance-եր են նաեւ Bolero-ն՝ սպանական պար մը $\frac{3}{4}$ չափով, որ բաւականին նմանութիւններ ունի Polonaise-ին, թէև վերջինէն աւելի արագ կ'ընդլայնուի։ Tarantella-ն որ Neapolitan արագ $\frac{6}{8}$ չափով պար մըն է ինչպէս նաեւ Saltarello-ն որուն լաւագոյն մէկ նմոյշը կարելի է գտնել Menoelsson-ի «Italian Symphony»-ին մէջ։

Քայլերգները (March) թէպէտ dance-եր չեն սակայն չափազանց նմանութիւն ունենալուն, form-ի տեսակէտէ, dance-ի սե-

սին կ'արժէ մի քանի խօսք ըսել անոնց մասին:

Dance-երու նման քայլերգները յղացուած են քայլերու միօրինակ rhythm տալու համար: Այս իսկ պատճառաւ միշտ $\frac{2}{4}$ և կամ $\frac{4}{4}$ չափով կը գրուէին: Ինչպէս dance-էն ծնունդ առած են dance form-երը, նմանապէս ալ march-երէն ծնունդ առած են marche form-երը որոնք թէ չափի և թէ ալ rhythmic տեսակէտներով march-երու կը նմանին սակայն չեն գրուիր քայլերու կըշ-ռոյթ տալու նպատակով: Marche form-երու

(Շարունակելի՝ 3)

լաւագոյն նմոյշներ են Schubert-ի գրած զաշնամուրի march-երը:

Ներկայ երաժիշտներ երբեմն կը գրեն կտորներ որոնց suite անունը կուտան թէպէտ սակայն բացի անունէն և ոչ մէկ նմանութիւն ունին հին suite form-երուն: Որով զանազանելու համար ներկայ suite-ները հին suite form-էն զանոնք կը կոչենք Modern rondo form:

Իբր եզրակացութիւն կարելի է ըսել թէ dance form-երը կը մշակեն ունկնդիր-ներուն rhythmic զգայութիւնները:

ՕՆՆԻԿ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԳԵՐ. ՏԵՂԱՊԱՀ ՀԱՅԵՐԸ

ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ

20 Մարտ երկուշաբթի, յետմիջօրէի ժամը 3ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպերեանի և Ս. Աթոռոյ կալուածոց քարտուղար Պր. Կ. Հինգլեանի մեկ-նեցաւ Խորայէլ, վանական կարգ մը հոգեւոր և կալուածական գործերու կարգադրութեանց հա-մար: Նորին Գերապատուութիւնը հնգօրեայ այ-ցելութենէ մը ետք վերադարձաւ մայրովանք 26 Մարտ Կիրակի, յետմիջօրէի ժամը 3ին: Թէ իր մեկնումին և թէ վերադարձին մինչև սահմանա-դուրս Գերապատու Հօր կ'ընկերանային Միաբան հայրեր, իսկ սահմանէն անդին զիմաւորութեան ու ողջերթի եկած էին Խորայէլաբնակ հոգեշնորհ վարդապետ հայրեր և յարգելի ազգայիններ:

Ի պատասխան Գեր. Տեղապահ Հօր փետր. 11-ի շնորհաւորական հեռագրին, ուղղուած Ն. Վեհ. եղիպտոսի Ֆարուք Թագաւորին, իր ծննդեան տարեդարձին առթիւ, ստացուած է հետեւեալ պատասխան-հեռագիրը Արքունի Սե-նեկապետէն:

ԱՊՏԻՆԻ ՊԱԼԱՏ

ԳԱՀԻՐԷ

Գերաւորհ

Տեղակալ Հայոց Պատրիարքոսեան

Երուսաղէմ

Իմ Օգոստիան Տէր եւ Վեհապետ՝ Նորին Վե-հապառաքին Թագաւոր, իր ծննդեան տարեդարձին առթիւ, Ձեր սգնի բարեմաղորութիւններէն զգացելով, ինձ հրամայեց յայտնել Ձեզի Իր շնորհակա-նութիւնները:

ՄԵՆ ՍԵՆԵԿԱՊԵՏ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

● 2 Մարտ ել. — Երեկոյեան «Հսկում»-ին քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան «Օգնեա անհաւատութեան իմում» բնարանով:

● 5 Մարտ Կիր. — Գ. Քառասնորդաց: Անա-ռակիւն. Ս. Պատարագը Ս. Հրեշտակապետաց Ե-կեղեցւոյն մէջ մատոյց Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գազանճեան:

● 8 Մարտ Դշ. — Հանգստեան Ս. Պատարա-գը հանգուցեալ Տ. Յովհաննէս Վրդ. Իթմէքճեա-նի մատոյց Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան, Յետ Ս. Պատարագի Թաղում նորոգ հանգուցեալ Յովհաննէս վարդապետի:

● 9 Մարտ ել. — Երեկոյեան «Հսկում»-ին քարոզեց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողարեան «Ոչ եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս յապաշխա-րութիւն» բնարանով:

● 12 Մարտ Կիր. — Գ. Քառասնորդաց: Տրե-սիսիւն. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յա-կոբեանց Տաճարի Ս. Դիւխարի մատրան մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբ-րահամեան:

● 16 Մարտ ել. — Երեկոյեան «Հսկում»-ին քարոզեց Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան «Ես եկի զի զկեանս ունիցին և առաւել ևս ու-նիցին» (Յովհ. Ժ. 11) բնարանով:

● 18 Մարտ Եր. — Մերոց Մանկանցն Քառասնից Սեբասիոյ. Ս. Պատարագը Ս. Դիւխարի մատրան մէջ մատոյց Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

— Յետմիջօրէի ժամը 2ին, զլիաւորութեամբ Գեր. Տեղապահ Հօր վարդապետ հայրեր հանդի-սաւոր երթով իջան Ս. Յարութեան Տաճար, «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքով թափօրը առաջնորդուեցաւ Ս. Գերեզման Գրիտոսի և ապա Դիւխարի այլն, ու հայապատկան Ս. Գրի-գոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւնը և նախատեսակ:

● 19 Մարտ Կիր. — Ե. Քառասնորդաց: Դա-

աւուրին. առաւօտուն Միաբան հայրեր զոյգ թափօրներով, առաջինը ժամը 5.30-ին, զվաւորութեամբ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանանի և երկրորդը ժամը 8-ին՝ զվաւորութեամբ Գեր. Տեղապահ Հօր իջան Ս. Բարութեան Տանաւ: Օրուան առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ: Ապա տեղի ունեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Պատարագ և քարոզեց Գեր. Տեղապահ Հայրը: Բետ Ս. Պատարագի կատարուեցաւ օրուան մեծահանգէս թափօրը Բրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր ի ներկայութեան յոգնախառն բաղմութեան և Ս. Թմբգմանչաց վարժարանի երկսեռ աշակերտութեան, որոնք վարժարանի Հոգ. Տեսչի մասնաւոր հարգադրութեամբը, լուցեալ մոմերի ձեռքին բոլորուած էին զոյգ շարքերով Ս. Գերեզմանին շուրջ, թափօրական անցքին երկու կողմերը: Արարողութեանց աւարտին զվաւորութեամբ Գեր. Տեղապահ Հօր վարդապետ հայրեր և ժողովուրդ վերադարձան մայրավանք պաշտօնական երթով:

● 24 Մարտ Ուրբ. — Ս. Բակրեանց Մայր Տանաւին մէջ յետ երեկոյեան ժամերգութեան կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակր նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաննի:

● 25 Մարտ Շբ. — Սրբոյն Գրիգորի Լուսաւոր-

չից: Սիւսանոյ մասնիւն ի վիրապն. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Բակրեանց Մայր Տանաւի Ս. Գրիգոր Լուսաւորչի խորանին վրայ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

Կէսօրէ վերջ, վարդապետ հայրեր զվաւորութեամբ Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեանի մեկնեցան Համբարձման լեռը, ուր Համբարձման սրբատեղւոյն մէջ կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն, «Հսկում» և յաջորդ օրուան առաւօտեան ժամերգութիւնը: Հուսկ յետոյ Ս. Պատարագը, Պատարագիչն էր Հոգ. Տ. Միւռն Վրդ. Կրճիկեան: Կէսգիշերին Միաբանութիւնը վերադարձաւ մայրավանք:

● 26 Մարտ Կիր. — Զ. Բառասնորդաց: Պատարան. առաւօտուն վարդապետ հայրեր, զվաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի հանդիսաւոր երթով մեկնեցան դէպի Համբարձման լեռը: Համբարձման սրբատեղւոյն մուտքին՝ եղաւ «Հրաշափառ»ի հանդիսաւոր ընդունելութիւն, որմէ ետք մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագը՝ դաւիթին մէջ յատկապէս պատրաստուած ընդարձակ վրանին տակ: Եպիսկոպոսական խոյր ի դուռն պատարագեց Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան: Թէ երէկ և թէ այսօր զգալի էր հաւատացեալներու բաղմութեան պակասը, օտարիկ հովերու և տեղատարափին պատճառաւ:



Ս. Արքուոյս Գեր. Տեղապահ Հայրը՝ օշապատուած նորընծայ Սարկաւագներով: Զախէն աջ՝ Վուսմապուռ Սրկ. Գապարեան, Եղիա Սրկ. Զոյանեան, Գեորգ Սրկ. Զինչիկեան եւ Գեղամ Սրկ. Գաբիկեան:

ՀԱՆՐԱՊԵՏ

Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎՐԴ. ԷԹՄԷՔՃԵԱՆԻ

Յաւով կ'արձանագրենք մահը Միաբանութեան տարէց անդամներէն Հոգ. Տ. Յովհաննէս Վրդ. Էթմէքճեանի, որ յետ երկարատեւ հիւանդութեան կնքեց իր մահկանացուն 7 Մարտ 1950 երեքշաբթի երեկոյեան ժամը 6.10ին, իր բնակարանին մէջ:

Հանգուցեալը ծնած էր Այնթապ 1875-ին: Իր ուսումը ստացած է տեղւոյն Ազգային վարժարանին մէջ, որուն շրջանը աւարտելէ յետոյ իր ընդունակութիւններուն բերմամբ կը կարգուի ուսուցիչ կրօնական երաժշտութեան դասերու եւ դպրապետ եկեղեցւոյ:

1900-ական թուականներուն որպէս ուսուցիչ եւ դպրապետ կը փոխադրուի Հալէպ, ուր 1909-ին կը ձեռնադրուի քահանայ Խապայեան Տ. Սահակ կաթողիկոսէն:

Այնուհետեւ Տ. Յովհաննէս քահանայ տեղագին եռանդով կը փարի իր կրօնական ասպարէզին, մասնաւորապէս 1914-ի Մեծ պատերազմին, բերելով իր անձնուէր ծառայութիւնը այն բոլոր կազմակերպութիւններուն՝ որոնք կանչուած էին լեցնելու բազմապիսի պահանջները Թրքահայաստանէն խուժող հազարաւոր հայ զաղթականներուն: Իր միջնորդութեամբ թրքական բանտէն կ'ազատին ծանօթ հայեր: Հալէպի մէջ այդ շրջաններուն ծայր տուող համահարակներու ընթացքին ան իր հայրական խնամքը կը բերէ ոչ միայն հայորդիներու, այլ նոյնիսկ անգլիական բանակի զինուորականներու որուն համար կ'արժանանայ մասնաւոր գնահատանքի:

1911-ին կ'այրիանայ, ու մինչեւ 1939 կը պաշտօնավարէ Հալէպի մէջ, վայելելով իր ծուխին խոր համակրանքը իբրեւ հեզահամբոյր եւ ամբասիր եկեղեցական:

1939 Երուսաղէմ կուգայ ու կ'անդամակցի Ս. Յակոբեանց Միաբանութեան: Միաժամանակ ստանալով վեղար եւ ապա նաեւ վարդապետական աստիճան, Լուսահոգի Տ. Մեսրոպ Ս. Պատրիարքէն: Կը պաշտօնավարէ Ս. Աթոռէն ներս իբրեւ ժամարար, ժամօրհնող, խոստովանահայր, զանձատան մարմնի անդամ, Տնօրէն Ժողովոյ անդամ եւ այլն:

Երկու տարիներէ ի վեր դատապարտուած էր անգործութեան իր հիւանդութեան պատճառաւ:

Հայր Յովհաննէս եկեղեցասէր, հեզահամբոյր եւ պարկեշտ եկեղեցական մը եղաւ, դառնալով առարկայ բոլորի համակրանքին:

Իր վերջին օժման եւ թաղման արարողութիւնները կատարուեցան 8 Մարտ Զորեքշաբթի առտու նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Գեր. Հօր, իսկ դամբանականը խօսեցաւ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեան, վեր հանելով հանգուցեալի կեանքն ու ծառայութիւնները Հայց. եկեղեցիին եւ հայ Ժողովուրդին համար:

Օրհնութիւն իր յիշատակին եւ հանգիստ իր հոգիին:

Տ Ե Տ Ր Ա Կ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ՍՐԲՈՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ

ՏՊԵԱԼ ԸՍՑ ՎԱՂԵՄԻ ԿԱՐԳԱԽՈՐՈՒԹԵԱՆՑ ՊԱՇՏԱՄԱՆՑ
ՆԱԽԱԳԱՀ ԱԹՈՌՈՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄԻ

1950

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ



Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՇՐՈՒՍԱՂԷՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՑԱԿՈՐԵԱՆՑ

1949

Էջ՝ 383

Գին՝ 30 Պաղ. Դանեկան